



**ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**



ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Երևան
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
2018

ՀՏԴ 070.1
ԳՄԴ 76.01
Լ 872

Լրագրողների անվտանգությունը. – Եր.:

Լ 872 Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2018.- 72 էջ:

«Լրագրողների անվտանգությունը» ձեռնարկը պատրաստել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ NED-ի (Ժողովրդավարության ազգային հիմնադրամ) ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն հայկական մեդիային պատերազմական իրավիճակների և բախումների ժամանակ» ծրագրի շրջանակներում: Գրքի բովանդակությունը միմիայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի NED-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀՏԴ 070.1
ԳՄԴ 76.01

ISBN 978-9939-1-0692-2

Խմբագրական կազմ՝
Մանե Գրիգորյան
Հարություն Մանսուրյան
Նունե Սարգսյան

Անգլերենից և ռուսերենից թարգմանությունը՝
Ծովինար Արևյանի

Ձևավորումը՝ Անտարես հրատարակչություն

Չափսը՝ 60x84/16: Ծավալը՝ 3 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



Նախաբան	4
Լրագրողների անվտանգության հիմնախնդիրները	8
Լրագրողների ֆիզիկական անվտանգությունը <i>TYR solutions-ի նյութերով</i>	14
Տվյալների անվտանգությունը <i>Միկոլա Կոստինիան</i>	26
Հոգեբանական տրավմայի հաղթահարումը <i>Dart center-ի նյութերով</i>	38
Երբ վախն ինձ այցելեց, ես արդեն փորձառու լրագրող էի <i>Նիկոլայ Գրիգորյան</i>	48
Մեփական երկրում պատերազմ լուսաբանելը ամենադժվար բանն է <i>Էդիկ Բադդասարյան</i>	56
Չլինել մսի կտոր <i>Սառա Խոջոյան</i>	60
Ապահովագրված լրագրություն <i>Սառա Խոջոյան</i>	64
Սարի Թաղի դասերը <i>Գայանե Մկրտչյան</i>	68





Լուսանկարը՝ Հովհաննիսյանի

2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ լրագրողների անվտանգությունը Հայաստանում լուրջ ուշադրության կարիք ունի: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, վերլուծելով իրավիճակը և կարևորելով մեդիաաշխատակիցների անվտանգությունը, իրականացրեց «Աջակցություն հայկական մեդիային պատերազմական իրավիճակների և բախումների ժամանակ» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված էր լրագրողներին ապահովել հատուկ պաշտպանա-

կան հանդերձանքով, վերապատրաստել ֆիզիկական և տեղեկատվական անվտանգության ու հոգեբանական տրավմայի հաղթահարման թեմաներով, հրապարակել հակամարտությունների և ճգնաժամերի լուսաբանմանը վերաբերող հոդվածներ media.am կայքում, ինչպես նաև կազմել ու հրատարակել «Լրագրողների անվտանգությունը» ձեռնարկը, որն էլ այժմ ձեռք առնում է: Այս ձեռնարկում տեղ են գտել ոչ միայն անցկացված դասընթացների ուսումնական նյութերը, այլև ներկայացված են հակամարտությունների և արտակարգ իրավիճակների լրատվության միջազգային ու տեղական փորձը, լրագրողների անձնական պատմությունները:

Հուսով ենք՝ այս ձեռնարկի գործնական խորհուրդները կօգնեն լրագրողներին՝ սեփական անվտանգության հարցերում առավել իրազեկված և պատրաստված լինել, ինչպես նաև՝ գիտակցված ու արդյունավետ լուսաբանել կենսական կարևորություն ունեցող և դրամատիկ թեմաները: Ձեռնարկը կարող է ևս մեկ անգամ հուշել խմբագրություններին՝ ներքին անվտանգության համակարգ ստեղծելու և հատուկ քաղաքականություն մշակելու կարևորության մասին, այդ քայլերն էլ կօգնեն ճգնաժամերը լուսաբանելիս և կինստիտուցիոնալացնեն գիտելիքները: Մենք չենք կարող կառավարել վտանգը, սպառնալիքը, սակայն կարող ենք կառավարել ռիսկը, նվազեցնել հետևանքները: Կարևոր է գիտակցումը, որ կան վտանգներ, որոնք կախված չեն մեզնից: Դրանք կարող են մեզ պատուհասել անկախ մեր կամքից: Անհրաժեշտ է ամենայն մանրամասնությամբ բացահայտել այդ վտանգ-սպառնալիքները և պատրաստ լինել դրանց:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում վերոնշյալ դասընթացներն անցկացրեցին և ձեռնարկի համար նյութեր տրամադրեցին փորձագետներ Սթիվեն Քուկը (Մեծ Բրիտանիա), Միկոլա Կոստինիանը (Ուկրաինա) և Անջելինա Ֆուսկոն (Իտալիա):

Ձեռնարկը համալրում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի մասնագիտական գրադարանը և նախատեսված է լրագրողների, ինֆորմացիոն ոլորտի այլ աշխատակիցների, փորձագետների, լրագրության ուսանողների համար:

Ի լրումն

Հայաստանի տարածքում և տարածաշրջանի թեժ կետերում զինված հարձակումների, բողոքի ցույցերի, ռազմական գործողությունների ընթացքում և ցանկացած այլ իրադրությունում, երբ ինքնապաշտպանություն է անհրաժեշտ, մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողը կարող է պաշտպանիչ հանդերձանք օգտագործել: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը լրագրողների համար գնել է 12 զրահաբաճկոն և 12 սաղավարտ:

2 զրահաբաճկոն և 1 սաղավարտ հնարավոր եղավ ձեռք բերել Մոնրեալում բնակվող լրագրող Լևոն Սևունցի ապրիլյան պատերազմից հետո կազմակերպած առցանց դրամահավաքի նվիրատվություններով:

Հանդերձանքն անվճար կտրամադրվի խմբագրություններին և ազատ լրագրողներին՝ անհրաժեշտության դեպքում: Նրանք կարող են դիմել Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, կնքել պայմանագիր, տեղեկանալ օգտագործման կանոններին:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը շնորհակալություն է հայտնում այս հնարավորության համար Ամերիկայի Միացյալ Նահանգների NED (National Endowment for Democracy) կազմակերպությանը, Լևոն Սևունցին և բոլոր նրանց, ովքեր մասնակցել են դրամահավաքին:

Նշումների համար



ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



Կոլաժ՝ Յան Շարանյանի

Պատերազմների, հակամարտությունների, արտակարգ իրավիճակների, մասսայական անկարգությունների կամ բախումներով բողոքի ցույցերի, խռչող հանցագործությունների, մեծ ու փոքր ողբերգությունների, զոհերի, շատ արյան, մարդկային ցավի ու տառապանքի վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է «լավ» ինֆորմացիա, որովհետև ամենալավ «վաճառվողն է»: Շատ լրատվամիջոցներ առաջինը դա են հաղոր-

դում: Այն գլխագրի, առաջին էջի, առաջին սյուժեի լրատվությունն է. պատմություններ մարդկային խեղված ճակատագրերի, մարդկային կրքերի, հերոսության, վախկոտության ու մեղավորների, արագ արձագանքման ու անտարբերության, ցավ պատճառելու ու վիշտը կիսելու, մարդասիրության, աջակցության, գթասրտության ու դաժանության մասին: Նման սրված իրավիճակներում հակամարտող կողմերը հիմնականում փակում են մուտքը դեպի տեղեկատվության աղբյուրներ, մարդու իրավունքները մղվում են մի կողմ, առանձին դեպքերում՝ կոպտորեն ոտնահարվում, և լրագրողների պրոֆեսիոնալիզմից է հաճախ կախված ստացվող տեղեկատվության օպերատիվությունը, ճշգրտությունը, անաչառությունը, հավասարակշռությունը, ամբողջականությունը, մարդկայնությունը: Միայն այդ դեպքում մարդիկ կհասկանան կատարվածը, կլինեն իրազեկ ու գիտակցված որոշումների ընդունակ: Օբյեկտիվության, չսպասված տեղերում հայտնվելու, «քիթն այլոց գործերի մեջ խոթելու» և բացահայտումների ու հրապարակայնացման համար լրագրողներին հաճախ չեն սիրում, խոչընդոտում են նրանց աշխատանքը, բռնանում են, հետապնդում, ահաբեկում, ձերբակալում են, ծեծում և նույնիսկ սպանում:

Սկսած 2005-ից «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունն ամենամյա զեկույց է հրապարակում՝ լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ: Ըստ այդ զեկույցի՝ 2016-ի ընթացքում ամբողջ աշխարհում սպանվել է 74 լրագրող: ՄԱԿ-ի տվյալներով վերջին տասնամյակում ավելի քան 800 լրագրող է սպանվել, իսկ վերջին 25 տարում՝ 2297: Լրագրողների համար ամենավտանգավոր երկիրը եղել է Իրաքը, որտեղ 25 տարվա ընթացքում սպանվել է մեդիայի 309 աշխատակից:

2013-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան, հաշվի առնելով լրագրողական կազմակերպությունների և միջազգային հանրության մտահոգություններն ու լրագրողների անվտանգության մասին 2012թ.-ի բանաձևի արդիականությունը, նոյեմբերի 2-ը հռչակեց լրագրողների դեմ ուղղված հանցագործությունների անպատժելիության դադարեցման օր:





Լրագրողների դեմ բռնություններ արձանագրվել են նաև Հայաստանում: Ամենաաղմկահարույցն, իհարկե, 2002 թվականին հանրային հեռուստաընկերության ղեկավար Տիգրան Նադդալյանի սպանությունն էր: Ահաբեկելու, լռեցնելու, մասնագիտական պարտականությունները կատարելուն խոչընդոտելու, իրենց ոչ ձեռնտու տեղեկատվության արտահոսքը կանխելու կամ պարզապես բերանը փակելու նպատակով տարբեր տարիներին հաշվեհարդար-հարձակումներ են եղել լրագրողների վրա: Միշտ չէ, որ բռնություն են գործում այսպես կոչված անհայտ անձինք: Հաճախ դրանք լինում են իրավապահ մարմինների կամ ուժային այլ կառույցների, նաև՝ մասնավոր պահնորդական ծառայության ներկայացուցիչներ: Նման դեպքերում հանցագործությունների բացահայտումն ավելի է դժվարանում: Հենց մասնագիտական իրենց պարտքը կատարելու համար հայ լրագրողների նկատմամբ բռնություններ գործադրվեցին Բաղրամյան պողոտայում բողոքի ակցիայի (2015-ի հունիսի 23) և ՊՊԾ գնդի գրավման հետ կապված ցույցը ցրելու ժամանակ (2016-ի հուլիսի 29): Եղան լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու մեջ մեղադրվողներ, սակայն պատժվողներ այդպես էլ չեղան: Թվարկածը հայաստանյան լրագրողների դեմ բռնությունների ամբողջական պատկերը չէ, դրանք ավելի շատ են: Իհարկե, կիրառվել են նաև լրատվամիջոցներին ու լրագրողներին լռեցնելու այլ եղանակներ. բացատրական զրույցներ՝ նվաստացուցիչ օգտակար խորհուրդներով և անթաքույց սպառնալիքներով, ֆինանսական ճնշումներ՝ հովանավորների ու գործընկերների շրջափակումներով և հարկային քաշքշուկներով, «շահավետ առաջարկներ», հատուկ ծառայությունների զինանոցի այլ մեթոդների կիրառումներ:

Սակայն այս ձեռնարկում մենք ավելի շատ կանդրադառնանք լրագրողների անվտանգությանը պատերազմական գոտիներում, արտակարգ իրավիճակներում և հակամարտությունների ժամանակ: Լրագրողների իրավունքները և պարտականությունները զիված հարձակումների ժամանակ որոշում է միջազգային հումանիտար իրավունքը, որի նորմերի մեծ մասն

ընդունված են աշխարհի բոլոր երկրների կողմից: Այս իրավունքի հանգուցային փաստաթղթերն են Հաագայի կոնվենցիան և դեկլարացիան, Ժնևի կոնվենցիան և ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևը: Սակայն մեր օրերում պատերազմող կողմերը մեծ մասամբ արհամարհում են այդ նորմերը:

1988 թ-ին Լրագրողների միջազգային ֆեդերացիան քննարկեց անվտանգության հարցերով զբաղվող մեկ միասնական միջազգային կառույց ստեղծելու գաղափարը: Հրապարակվեց հատուկ կոդեքս, որի հիման վրա այսօր BBC-ն, CNN-ը, Reuters-ը և Associated press-ը պահանջում են հատուկ պատրաստվածություն մինչև մեդիաաշխատակցի վտանգավոր գոտի մեկնելը: Այս խոշոր մեդիա ընկերությունները գիտակցեցին, որ հնարավոր ռիսկերը կանխելու և նվազեցնելու համար հատուկ դասընթացներ են անհրաժեշտ:

Մեդիադրոտի աշխատակցի այցը վտանգավոր գոտի պահանջում է ոչ միայն պատշաճ պատրաստվածություն, այլ նաև տեղեկացվածություն, ապահովագրություն և սարքավորումներ:

Ազատ կամք. պատերազմի լուսաբանումը ենթադրում է հնարավոր ռիսկերի գիտակցում, հետևաբար, լրագրողն այդ քայլին պետք է դիմի միմիայն կամավոր սկզբունքով:

Փորձառություն. պատերազմի լուսաբանումը հատուկ հմտություններ և փորձ է պահանջում, հետևաբար, խմբագիրը պետք է ընտրի ավելի փորձառու և ռիսկային իրավիճակների սովոր լրագրողի:

Պատրաստվածություն. պատերազմական կամ վտանգավոր այլ գոտիներում աշխատանքային կանոնների վերաբերյալ դասընթացներն օգտակար կարող են լինել լրագրողի համար: Մեկնելուց առաջ լրագրողը պետք է նաև առաջին բուժօգնության նախապատրաստական դասընթաց անցնի:

Սարքավորումներ. խմբագրությունը վտանգավոր գոտի գործուղվող աշխատակցին պետք է ապահովի անվտանգության պարագաներով (պաշտպանիչ բաճկոն, սաղավարտ), կապի միջոցներով և առաջին օգնության պարագաներով:

Ապահովագրություն. պատերազմական գոտիներում աշխատող լրագրողը պետք է ապահովագրություն ունենա՝ հի-



վանդության, հաշմանդամության կամ մահվան պարագայում ծախսերի համար:

Խմբագրությունն այս հարցը պետք է կարգավորի մինչև աշխատակցին վտանգավոր հանձնարարություն տալը:

Հոգեբանական աջակցություն. Խմբագրությունը պետք է պատրաստ լինի պատերազմական և այլ վտանգավոր իրավիճակների լուսաբանումից հետո լրագրողին, նրա ցանկության դեպքում, ապահովել հոգեբանական խորհրդատվությամբ:

Իրավական պաշտպանություն. Ժնևի կոնվենցիայի 1-ին հավելվածի 79-րդ հոդվածի համաձայն՝ վտանգավոր իրավիճակներում աշխատող լրագրողը համարվում է քաղաքացիական անձ: Լրագրողի վրա ցանկացած դիտավորյալ հարձակում համարվում է այս դրույթի ոտնահարում և որակվում որպես ռազմական հանցագործություն: Համապատասխանաբար, լրագրողը չպետք է այս կարգավիճակին հակասող որևէ քայլ ձեռնարկի, օրինակ, պատերազմական իրավիճակում ուղղակիորեն աջակցություն ցուցաբերի, զենք կրի կամ լրտեսի:





TYR solutions-ի նյութերով

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



Լուսանկարը՝ Reuters

Ֆիզիկական անվտանգության կանոնների իմացությունն ու պաշտպանումը հաճախ կարող են երաշխավորել, որ վտանգավոր իրավիճակում մասնագիտական պարտականությունը կատարող մեդիայի աշխատակիցը չի տուժի: Անվտանգության հարցում մանրուքներ չկան, և ամեն ինչ կարևոր է՝ սկսած խմբագրությունում հանձնարարության ձևակերպման պահից մինչև լրագրողի աշխատանքի ավարտը:

Ամեն մանրուք պետք է նախօրոք պլանավորել՝ մինչ վտանգավոր տեղում հանձնարարության կատարումը:

Պլանավորումը նախապատրաստական աշխատանքի կարևորագույն փուլն է, որի նպատակն է ամենաանվտանգ եղանակով մեծացնել աշխատանքն իրականացնելու հավանականությունը: Պետք է հանգամանորեն նախապատրաստվել՝ առաջադրանքի հաջողությունն ապահովելու, ռիսկերը նվազեցնելու և իրավիճակը կառավարելու համար:

Այս գործընթացում կարևոր է պահպանել տրամաբանական հերթականությունը՝ սկզբից մինչև վերջ: Նախքան պլանավորում սկսելը, անհրաժեշտ է հստակ ձևակերպել առաջադրանքը. մնացած ամեն բան պլանավորվում է դրա շուրջ: Զգոնությունը հանձնարարության համակողմանի վերլուծությունն է: Այստեղ առավել հաճախ տրվող հարցը պետք է լինի «ինչ անել, եթե...»:



Ունեցեք գործողությունների հիմնական և այլընտրանքային պլան (պլան Բ):

Խոսքն այնպիսի աշխատանքի մասին է, որը կարող է վտանգել ձեր կյանքը: Աշխատեք, որպեսզի գործողությունների պլանը լինի լիարժեք, հանգամանորեն ուսումնասիրեք տեղանքը, որտեղ պատրաստվում եք գտնվել, և մտածեք՝

- ինչպե՞ս եք ճանապարհորդելու,
- որտե՞ղ եք մնալու,
- ի՞նչ այլընտրանքային տարբերակներ ունեք,
- ի՞նչ սարքավորումներ ու պարագաներ են ձեզ անհրաժեշտ,
- ի՞նչ կապեր ունեք և ի՞նչ կապեր են հարկավոր,
- ի՞նչ վտանգներ կան և ինչպես կարելի է կանխել դրանք,
- ինչպե՞ս կարելի է օգնություն ստանալ,
- որո՞նք են ապահով վայրերը:

Թիմի այլ անդամների հետ (լուսանկարիչ, օպերատոր, պրոդյուսեր) նախօրոք որոշեք հանդիպման վայրերը, եթե միմյանցից հեռանալու եք: Ձեզ հետ վերցրեք բջջային հեռախոս՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված հեռախոս:

սահամարները նախապես կարգավորելով արագ միանալու համար: Նախքան ճանապարհ ընկնելը, անայսման փորձարկեք դրանք: Ձեզ հետ առաջին բժշկական օգնության պայուսակ ունեցեք և իմացեք՝ ինչպես օգտագործել այն: Ձեզ մոտ պահեք աչքերը պաշտպանելու միջոցներ՝ լողի ակնոցներ (արցունքաբեր գազից պաշտպանվելու համար), պաշտպանիչ և հարվածադիմացկուն ապակուց ակնոցներ, դեմքը ծածկող երեսկալ կամ հակագազ, ծնկակալներ, փոքրիկ կրակմարիչ, մեկանգամյա օգտագործման հակաաղմկային ականջակալներ, ռեսպիրատոր (արցունքաբեր գազից և փոշուց պաշտպանվելու համար), պաշտպանիչ գլխարկ:

Հագեք ազատ, բնական գործվածքից հագուստ, քանի որ այն չի բռնկվի այնքան արագ, որքան սինթետիկը: Ցանկալի է, որ ձեր հագուստը գույնով տարբերվի ոստիկանության և զինված ուժերի համազգեստից: Հարմարավետ, ամուր, ձիգ կապված կոշիկները անհրաժեշտություն են:

Ուսապարկում այնքան ուտելիք և ջուր ունեցեք, որ հերիքի ձեզ մեկ օր, եթե չկարողանաք դուրս գալ տարածքից: Ուսապարկը կարելի է որպես վահան օգտագործել՝ ռետինե փամփուշտներից, ջրցան մեքենաներից և բեկորներից պաշտպանվելու համար: Հոգ տարեք, որպեսզի ուսապարկը գոնե մեկ կապով ամրանա կրծքավանդակի հատվածում, մեկով էլ՝ գոտկատեղի հատվածում. այդպես հարմար է, երբ վազում եք:

Ձեզ մոտ պահեք բժշկի նշանակած, դեղատնից գնած պիտակավորված դեղորայք: Անհրաժեշտության դեպքում պետք է անայսման ունենալ զրահաբաճկոն և սաղավարտ:

Եթե ձեզ հետ դեպք է պատահել, ապա այդ մասին հաղորդելիս անպայման նշեք, թե ով եք, որտեղ եք, ինչ է պատահել, երբ և ինչ քայլեր եք ձեռնարկել և ինչի կարիք ունեք:



Վտանգավոր հանձնարարության մեկնելիս հարկավոր է խմբագրությունում ուղևորության մասին բրիֆինգ անցկացնել, մշակել հաղորդակցության պլան և հավաստիանալ, որ բոլորն իրազեկ են ծրագրերի, հնարավոր չնախատեսված դեպքերի, գործող ընթացակարգերի մասին: Մեկնե-

լուց առաջ պետք է տեղեկանալ անվտանգության իրավիճակի մասին, ապահովել, որ ուղևորակազմից գոնե մեկը միշտ անպայման իմանա, թե որտեղ եք գտնվում: Բարձր ռիսկային գործը թիմային աշխատանք է: Միասին առավել անվտանգ է, հատկապես գիշերային ժամերին: Փորձեք միասին մնալ, եթե զինված բախումներ են տեղի ունենում:



«Դռնեցկում մի միջադեպ տեղի ունեցավ. ինձ առևանգեցին որոշ ժամանակով, շատ երկար չէր, այնուամենայնիվ՝ մոտ 7–8 ժամ: Սարսափելի էր: Ահա թե ինչու է կարևոր, որ մարդիկ իմանան՝ որտեղ եք:

Միաժամանակ անհանգիստ էի ամերիկացի գործընկերոջս համար, քանի որ նրան լրտեսի տեղ էին դրել ու տեղափոխել էին այլ մեքենայով: Անհանգիստ էի նրա անվտանգություն համար:

Իմ անվտանգության համար էլ էի շատ անհանգիստ: Ինչ–որ պահի շնչառությունս դժվարացել էր, բայց հետո որոշեցի խոսել հետները: Այս խորհուրդը շատ էի լսել՝ այնպես արա, որ քո մեջ մարդ տեսնեն, ոչ թե մսի կտոր: Հենց սկսես զրուցել, ձեր միջև կապ կհաստատվի: Սկսեցի խոսել ֆուտբոլից, ու զրույցը ստացվեց: Նրանք ինձ ազատ արձակեցին»:

Օլիվեր Քերոլ

Բրիտանացի լրագրող

(Օլիվեր Քերոլի մասին հոդվածն ամբողջությամբ տես էջ 60–ում):



Ապստամբությունների ժամանակ համարժեք արձագանքեք վտանգին կամ նախազգուշացման նշաններին: Պատրաստ եղեք փախչել ծխից, կրակից, ոստիկանությունից և թոչող առարկաներից: Արեք դա գլուխն իջեցրած վիճակում:

Միշտ մասնույժ տարբերանշան կրեք, բայց թաքցրեք այն, եթե անհարկի ուշադրություն է գրավում: Մի ներկայացեք որպես լրագրող, եթե չեք ուզում էլ ավելի բորբոքել ամբոխին: Հարցազրույցները բախումների տարածքից դուրս անցկացրեք: Պարտադիր չէ, որ լրագրողները լինեն ցուցարարների շարքերում. կարևորն այն է, որ հնարավոր լինի տեսնել, թե ինչ է կատարվում:

Քայլեք ցուցարարների կողքով: Մարդիկ, ովքեր քարեր են նետում, սովորաբար դա անում են հավաքված ցուցարարների կենտրոնից, որպեսզի հետո կարողանան արագ խառնվել ամբոխին: Եթե դուք լուսանկարիչ եք կամ օպերատոր, փորձեք նկարահանել ավելի բարձր կետից կամ կողքից:

Զգույշ մնացեք ձեզ վրա թռչող իրերից: Ոչինչ մի վերցրեք գետնից: Եթե վերցնեք ցուցարարների նետած բեկորները, ձեզ կարող են ձերբակալել, որովհետև կարող է թվալ, որ դուք եք դրանք նետում: Եթե վերցնեք արցունքաբեր գազով լի տարան, կվառեք ձեր ձեռքը:

Մի ընդդիմացեք ձերբակալմանը: Եթե ձերբակալվել եք ցույցի ժամանակ՝ ձեզ հավանաբար կտանեն ձերբակալվածներին պահելու վայրը, որտեղ ստիպված կլինեք սպասել համապատասխան ընթացակարգին: Ներկայացեք ձերբակալված անձանց պահելու վայրում, որտեղ ոստիկաններն ավելի հանգիստ են:



Խորհուրդներ արցունքաբեր գազից պաշտպանվելու համար

Փորձը ցույց է տալիս, որ ապստամբությունները կառավարելու, ամբոխը ցրելու և անհատներին ճնշելու համար ուժային կառույցների կողմից հիմնականում օգտագործվում է արցունքաբեր գազ: Այն նախատեսված է ցավ պատճառելու համար: Գազի ազդեցությունը ժամանակավոր է: Ախտանիշների մեծ մասը թեթևանում են գազի կիրառումից հետո մի քանի ժամվա ընթացքում:

Եթե կարծում եք, որ հնարավոր է արցունքաբեր գազ կիրառեն, կարող եք խոնավ/թաց թաշկինակ պահել քթի և բերա-

նի մոտ՝ վրան քամելով լիմոնի հյութ կամ խնձորի քացախ: Ձեզ մոտ տուփ պահեք՝ լիմոնի մզվածքի և խնձորի քացախի մեջ թաթախված թաշկինակով կամ թղթե սրբիչով: Կտրտած սոխի հոտը շնչելը նույնպես կարող է օգնել:

Արցունքաբեր գազը սովորաբար կիրառվում է նոնակի տեսքով, որը տեղադրվում է զենքի փողին և կրակոցի միջոցով արձակվում զենքից: Այդ պատճառով գազի կիրառման ժամանակ դուք կարող է կրակոցի ձայներ լսեք: Մի ենթադրեք, որ ձեզ վրա կրակում են: Ուշադիր եղեք և խուսափեք նոնակի ուղղությունից: Արցունքաբեր գազով նոնակները հաճախ պայթում են օդում՝ արձակելով մետաղյա տարա, որը տարածում է գազը: Պայթյունից հետո արցունքաբեր գազի բալոնին մի դիպեք, այն դեռևս կարող է պայթել և վնասվածք պատճառել: Արցունքաբեր գազից ամենալավ պաշտպանությունը դիմակ կրելն է, բայց եթե այդ պահին դիմակ չունեք, կան գործողություններ, որոնք կարող են նվազեցնել վնասները:

Արցունքաբեր գազի կիրառման դեպքում դիրքավորվեք քամու ուղղությամբ հակառակ: Եթե գազն արդեն հարվածել է ձեզ, փախեք որքան կարող եք արագ՝ փորձելով քիչ շնչել: Խուճապի մի՛ մատնվեք: Դրանով դուք միայն էլ ավելի կոժվարացնեք շնչելը, ավելի մեծ քանակությամբ ծուխ կկլանեք, և ավելի ցավոտ կլինի: Մի քանի շերտ հագուստ հագեք: Երբ որ հագուստի մի շերտը կլանի ծուխը, ազատվեք դրանից: Փորձեք վրայից անջրանցիկ շոր՝ անձրևանոց, հագնել: Կարող եք օգտագործել աղբի տոպրակներ, եթե այլ հնարավորություն չկա: Սուզվելու համար նախատեսված ակնոցը պաշտպանության հրաշալի միջոց է: Եթե քիմիական նյութերից պաշտպանվելու ակնոց չունեք, կարող եք հեշտ կրվող ջրային ակնոց օգտագործել: Երբեք մի կրեք կոնտակտային ոսպնյակներ այն վայրերում, որտեղ արցունքաբեր գազ կարող է կիրառվել: Եթե կրում եք, անմիջապես հանեք, քանի որ դրանք կվնասեն աչքերը: Եթե ակնոց կամ որևէ տեսակի դիմակ չունեք, կարող եք շնչել ձեր վերնաշապիկի ներսի օդը, քանի որ այնտեղ ավելի քիչ օդաշրջանառություն կա ու, հետևաբար, գազի ավելի քիչ կուտակում կլինի: Բայց դա կարող է քիչ արդյունավետ լինել, եթե գործվածքն արդեն կլանել է գազը:

Այրվածքների համար կարելի է բժշկական բիոտ օգտագործել: Խուսափեք դիմահարդարումից, այն կլիթանի գազի ազդեցությունը:

 **Ռետինե փամփուշտները** նույնպես հաճախ են կիրառվում ուստիկանության կողմից: Եթե չեք կարող վազել կամ թաքնվել որևէ տեղ, ուստիկանությանը մեջքով շրջվեք, ծնկի իջեք, իջեցրեք գլուխը և պաշտպանեք դեմքը: Ձեր ուսապարկը կարող է որպես ծածկ ծառայել:

 **Ջրցան սարքերը** հեշտ է նկատել: Եթե դրանք գործի դրվեն, ետ շրջվեք, կծկվեք ներքև, փակեք աչքերը և վրանի պես մի բան ստեղծեք քթի և բերանի մոտ, որպեսզի շնչելու օդ լինի: Իմացեք, որ ջուրը կարող է ձեզ քշել: Աշխատեք թիմի հետ և մտովի կազմեք ձեր փախուստի ճանապարհի քարտեզը, եթե ամեն ինչ անբարենպաստ դասավորվի:

 Պատերազմական իրավիճակներ, հակամարտության գոտիներ

Բազմաթիվ լրագրողներ ամբողջ աշխարհում գոհվում են պատերազմական գործողություններ լուսաբանելիս: Լրագրողները կարող են թիրախավորվել սխալմամբ կամ դիտավորյալ: Քիչ չեն դեպքերը, երբ լրագրողները նշանառուների կամ հարձակումների զոհ են դարձել: Լրագրողի հիմնական պաշտպանությունը իր իրազեկությունն է: Կարողանալով ճիշտ գնահատել զինվորականների գործողությունները և կիրառվող զենք ու զինամթերքի հնարավորությունները, լրագրողները հիմնականում կարող են խուսափել վնասվածքներից:

Թե՛՛ կետերում հայտնվելուց առաջ պետք է հիշել, որ մեդիայի ներկայացուցիչներին չի կարելի հազնել զինվորական արտահագուստ: Տեսախցիկները հակառակորդի կողմից սխալմամբ կարող է ընկալվել որպես զենք: Տեսախցիկի օբյեկտիվը, ակնոցը, գոտու մետաղական հատվածը, լաքապատ կաշվից իրերը, ժամացույցները կարող են արևի լույսն արտացոլել և

անհարկի ուշադրություն հրավիրել: Լուսանկարչական սարքի լուսարձակումը կարող է ընկալվել որպես կրակոց:

Նկարահանող սարքերի լույսերը կարող են նկատելի լինել մթի մեջ նույնիսկ մեծ հեռավորությունից: Վառած ծխախոտը նշանառուների համար հարմար թիրախ է:

Եթե ձեզ ուղեկցում են պաշտպանական բանակի ներկայացուցիչներ, ապա պետք է հետևել անվտանգության վերաբերյալ նրանց ցուցումներին:

Անձնական պաշտպանությունն իրականացվում է զրահաբանկոնների և զրահաշապիկների օգնությամբ, որոնցից յուրաքանչյուրը պաշտպանության տարբեր մակարդակներ է ապահովում: Ջրահաբանկոնները լինում են տարբեր ձևի ու չափսի և նախատեսված են մարմնի վերին հատվածի՝ կենսական նշանակություն ունեցող օրգանների պաշտպանության համար: Ջրահաբանկոնը պատրաստված է փամփշտադիմացկուն ճկուն նյութից՝ ներսից, իսկ դրսից այն ունի շերտ, որը պաշտպանություն է ապահովում ցածր, ինչպես նաև որոշ բարձր արագության սպառազինություններից: Պաշտպանությունն ամրացնելու նպատակով բանկոնի արտաքին շերտի գրպանների տակ կարելի է տեղադրել սալիկներ, որոնք պաշտպանում են բարձր արագության սպառազինությունների բազմակի հարվածներից: Արտադրողները սովորաբար պիտակների վրա նշում են, թե զրահաբանկոնը և կերամիկական սալիկները ինչ մակարդակի պաշտպանություն են ապահովում:

Հրազենից պաշտպանվելու համար փորձեք գտնել **ստատիկ ծածկ**, օրինակ որևէ առարկա, որը փամփշտադիմացկուն է և առկա է տվյալ տարածքում՝ դրա տակ կամ ետևում թաքնվելու համար: Օրինակ՝ աղյուսե պատ, ժայռոտ տեղանք, հողաթումբ, մեքենա, ծառ (առնվազն 1 մետր հաստության):

Շարժական ծածկերը որոշ չափով կարող են պաշտպանել սովորական սպառազինություններից, այդուհանդերձ, նույնիսկ զրահապատ մեքենաները թափանցելի են հզոր, մեծ տրամաչափի կրակահերթերի համար:

Ուղիղ կրակահերթի ժամանակ հրետանու կամ ականանետների միջոցով թիրախավորվում են կոնկրետ կետեր՝ օգտա-

գործելով դիտման դաշտի մեթոդները: Սա տեղի է ունենում թիրախների վրա կրակ բացելով՝ օգտագործելով կամ զենքի ուղիղ տեսադաշտը դեպի թիրախը կամ կարգավորելով կրակելու դիրքը համապատասխան անձնակազմի կողմից:

Ամենանոր, պայթյունի ծավալով ամենածանր և տեսականորեն ամենաճշգրիտ զենքը օգտագործվում է օդում: Իրենց պայթուցիկ ազդեցության պատճառով մինչև 2000 կգ-ի հասնող ռումբերը կարող են վտանգ ներկայացնել նաև բոլոր նրանց համար, ովքեր գտնվում են թիրախի մոտակայքում: 1980-ականների կեսերից սկսած ճշգրիտ կառավարման ռումբերն ու հրթիռներն իրենց կայուն օգտագործումն են գտել օդային ուժերի կողմից: Այս հրթիռներն ու ռումբերը կարող են նետվել կործանիչներից, ռմբակոծիչ ինքնաթիռներից և ուղղաթիռներից:

Անօդաչու թռչող սարքերը, ըստ ռազմական փորձագետների, կարողանում են իրականացնել ավիացիային բնորոշ բոլոր գործառնությունները՝ բացառությամբ մարտադաշտից վիրավորների դուրս բերման և փոխադրման:

ԱՄՆ-ի բանակում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ անօդաչու թռչող սարքերը ի վիճակի են իրականացնել մարտադաշտում հետախուզության հետ կապված խնդիրների 67%-ը, զինված ուժերի պահպանման գործառնությունների 50%-ը, մարտական խոցման գործառնությունների միայն 25%-ը:

Անօդաչուներն օգտագործվում են հիմնականում այն ժամանակ, երբ ավիացիայի գործածումը շատ դժվար է կամ վտանգավոր: Այդ սարքերը ի վիճակի են 7 օր շարունակ՝ 24 ժամ տեղեկություններ տրամադրել հակառակորդի մասին՝ օդում մնալով մինչև 17 ժամ: Իրականացնելով տեղանքի լուսա և տեսանկարահանումը՝ այդ սարքերը տեղեկությունները ուղարկում են ռազմակայան: Հետազոտությունները ցույց են տվել, որ արտակարգ իրավիճակների պայմաններում օդաչուները կարող են արագ որոշումներ կայացնել, սակայն անօդաչուների տեխնիկական աննշան անսարքության պայմաններում դրանք կարող են վթարի ենթարկվել:

Ծանր սպառազինություններից պաշտպանվելու մասին խորհուրդներ տալը դժվար է, քանի որ կան դրանց օգտագործման բազմաթիվ համակարգեր և զենքերի տեսակներ՝ իրենց ուրույն բնութագրով: Պետք է հիշել, որ բոլոր այն զենքերը, որոնք օգտագործվում են ձեր մոտակայքում, նախատեսված են սպանելու համար: Ամենալավ պաշտպանությունը հրետանու ռմբակոծության վայրից հեռու լինելն է: Այսինքն՝ պետք է մոտ չլինել ակնհայտ թիրախներին: Բաց տարածքի տեղանքը, ուր ընկնում է ռումբը, ամենակարևոր գործոնն է պայթյունի ժամանակ: Կոշտ գետնի վրա պայթյունը տեղի կունենա անմիջապես գետնին, իսկ փափուկ գետնի վրա փոքր կզսպի պայթյունը և կնվազեցնի բեկորների տարածումը: Կոշտ գետնի վրա պայթյունը նաև կխփի մի փոքր դեպի վերև՝ ցրելով բեկորները: Լինի դա կոշտ, թե փափուկ գետնի վրա, անհապաղ գործողությունը պետք է լինի ուղիղ պատկեր: Եթե մոտակայքում (4-5 մետր հեռավորությամբ) փոս կամ խորություն կա, այն պետք է օգտագործել: Մեծ սխալ է նման դեպքում վազելը: Կանգնած վիճակում գտնվողին՝ անկախ վազելու հանգամանքից, պայթյունը առաջինն է հարվածում:

Շինությունները, քարը կամ աղյուսը փամփշտադիմացկուն և բեկորադիմացկուն են, եթե ունեն առնվազն 0.45 մետր հաստություն:

Ավազե պարկերը հաճախ օգտագործում են պաշտպանական նպատակով: Ավազե պարկերը կապտովեն, եթե չափից դուրս լիքն են լցված: Այս իսկ պատճառով պետք է լցնել պարկերի միայն երեք քառորդ մասը: Վերևի հարկում չափից դուրս շատ ավազե պարկերը կծանրաբեռնեն հատակը: Վերա-

կառուցված առաստաղները կամրացնեն ընդհանուր սենյակը: Շենքի դրսային պատերը կարելի է ամրապնդել՝ շենքի ներսից կամ դրսից ավազե պարկեր տեղադրելով: Ներսի մասում ավազե պարկեր տեղադրելու դեպքում դրսից չի երևա, որ շենքը այս կերպ պաշտպանված է և ավելորդ ուշադրություն չի գրավի: Այնուամենայնիվ ներսում ավազե պարկեր տեղադրելը նվազեցնում է ներքին տարածքը: Այնպես տեղադրեք պարկերը, որ սենյակում օդ խաղա:

Շատ կարևոր է գիտակցելն ու մտապահելը, որ ձեր ֆիզիկական անվտանգությունը ստացած հանձնարարությունն արդյունավետ իրականացնելու առաջին նախապայմանն է: Հիշեք, որ ձեր կյանքը շատ ավելի թանկ է, քան ձեր պատրաստած նյութը, և որ ձեզ սպասում են խմբագրությունում ու տանը, և դուք պարտավոր եք վերադառնալ, ու շատ լավ կլինի, որ դա անեք առողջ ու անվնաս:

Նշումների համար






Միկոլա Կոստինիան

Տեղեկատվական անվտանգության փորձագետ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Լուսանկարը՝ Մոնա Քոչարյանի



Ի՞նչ է տվյալների անվտանգությունը, և ինչ է այն ենթադրում

Թվայնացումն ու սոցիալական ցանցերն արմատապես փոխել են մեդիայի հնարավորությունները, հզորացրել կարողությունները, բայցև, մյուս կողմից, լրագրողը դարձել է առավել ճանաչելի, նրա բոլոր տվյալները սփռված են ցանցում՝ հասցեներ, հեռախոս, ընտանիք, հարազատներ, կապեր, անցած ճա-

նապարհ, եղած վայրեր, նախասիրություններ, մտքեր, գաղափարներ, հայթայթած տեղեկատվություն... Իսկ երբ լրագրողը զբաղվում է հետաքննությամբ կամ հայտնվում է հակամարտ կողմերի սահմանագծին, երբ նրանով սկսում են հետաքրքրվել մեղմ ասած՝ ոչ բարյացակամները կամ նեղացածները, պարզապես անհրաժեշտություն է դառնում մտահոգվել անձնական ու լրագրողական տվյալների անվտանգության վերաբերյալ:

Լրագրողական տվյալների անվտանգությունն այն է, երբ երրորդ անձը չի կարող չարտոնված մուտք ունենալ այդ տվյալներին, չի կարող կոտրել լրագրողի էլեկտրոնային փոստը, նրա գրառումները սոցիալական ցանցերում, ֆայլափոխանակման հոսթինգները, մեսենջերները: Նույնիսկ եթե ինչ-որ կերպ երրորդ անձի ձեռքն ընկնի լրագրողի համակարգիչը, սմարթֆոնը կամ համակարգչային կրիչը, տվյալները կմնան անհասանելի: Այդ տվյալները հափշտակել հնարավոր չէ նաև դրանց փոխանցման ընթացքում, ոչ ինտերնետ մատակարարի մակարդակով, ոչ էլ, օրինակ wi-fi ցանցի, որին այդ պահին միացել է լրագրողը:

Լրագրողն ինքը միշտ կարող է մուտք գործել իր տվյալների բազա, այսինքն՝ եթե անգամ կոտրվել է, կորել է, գողացել են նրա նոութբուքը, սմարթֆոնը կամ համակարգչային կրիչը, միևնույն է, աշխատանքի համար անհրաժեշտ տվյալները պիտի հասանելի լինեն լրագրողին:

Երրորդ անձը չի կարող չարտոնված կերպով փոփոխել այդ տվյալները, օրինակ՝ աննկատ փոխել համակարգչում ֆայլերը, էլ. փոստով նամակագրությունը, ֆայլային հոսթինգներում գտնվող ֆայլերը և այլն:

Կարևոր է հիշել, որ տվյալների բացարձակ անվտանգություն գոյություն չունի: Այնուհանդերձ հնարավոր է հասնել անվտանգության պատշաճ մակարդակի: Դա միանգամայն հասանելի ինդիք է ցանկացած լրագրողի և խմբագրության համար:

Ուրեմն, ինչպես ապահովել սեփական տվյալների անվտանգությունը: Դրա համար նախ անհրաժեշտ է գնահատել ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման համակարգ մշակել:

Ուշադրություն դարձրեք, որ խոսքը կառավարման որոշումների և ոչ թե անվտանգության տեխնիկայի մասին է: Հենց

ճիշտ որոշումների և համակարգային մոտեցումների միջոցով է հնարավոր դառնում հասնել տվյալների անվտանգությանը, այլ ոչ թե համակարգչի կամ սմարթֆոնի մեջ ներբեռնված այս կամ այն ծրագրի:

Կա ևս մեկ կարևոր հանգամանք. ռիսկերի կառավարումը որպես կանոն ավելի լավ աշխատում է կազմակերպության, քան անհատական լրագրողի մակարդակով: Այսինքն՝ պետք է պաշտպանվել խմբագրության մակարդակով և միայն այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ (կամ բավարար չէ)՝ անհատական ձևով:

Ինչի՞ց է պետք պաշտպանվել: Ռիսկերի գնահատում

Այսպիսով, անվտանգությունը սկսվում է ռիսկերի գնահատումից: Ռիսկերի գնահատումը պատկերացում կտա, թե ինչից է պետք պաշտպանվել և թե ինչից պաշտպանվել պետք չէ: Առանց ռիսկերի գնահատման դուք երբեք չեք իմանա՝ ճիշտ են արդյոք անվտանգության այն միջոցները, որոնք դուք ընտրում եք և, ընդհանրապես, աշխատում են դրանք: Առանց ռիսկերի գնահատման, ինչ էլ որ անելու լինեք, արդյունավետ լինել չի կարող: Եթե անգամ լինի, ապա միայն երջանիկ պատահակալությունով:

Ռիսկերի գնահատումը կազմակերպության ղեկավարության կողմից ժամեր շարունակ քննարկվելիք թեմա է: Եթե դուք ռիսկերի գնահատմամբ զբաղվում եք անհատապես, ապա թղթին հանձնած ձեր մոտորումները կիսեն ոչ ավելի, քան քառասուն րոպե: Վերոնշյալ քննարկումներին կամ անհատական դիտարկումներին կարելի է ներգրավել ներքին խորհրդատուի, որը ճիշտ հարցեր կտա: Ընդ որում, ողջ այս գործընթացն ու ռիսկերի գնահատման արդյունքները միշտ կազմակերպության ղեկավարության կամ առանձին լրագրողի սեփականությունն են:

Ջրույցի/դիտարկումների արդյունքում պետք է հասկանալ

- Ի՞նչն է պետք պաշտպանել: Ի՞նչն է կարևոր: Վերջնական արդյունքում կկազմվի այն կարևոր տվյալների ցուցակը, որոնք պետք է պաշտպանել: Օրինակ՝ էլեկտրոնային փոստով նամակագրությունը, ֆինանսական թղթաբանությունը, որը պահպանվում է ներքին սերվերի վրա և գլխավոր հաշվապահի համակարգչում, աշխատակիցների համակարգիչներում և սմարթֆոններում պահպանվող տվյալները, Ֆեյսբուք-մեսենջերով կամ այլ մեսենջերներով նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները և այլն:
- Ի՞նչ կարող է պատահել այն ամենի հետ, ինչ մենք ուզում ենք պաշտպանել: Ինչի՞ց ենք մենք վախենում: Ի՞նչ վիճակագրական տվյալներ ու նախադեպեր կան:

Կազմվում է վտանգների ցուցակը՝ այն ամենը, ինչը սպառնում է նախորդ ցուցակի կետերից յուրաքանչյուրին: Օրինակ՝ հարևան պետության հատուկ ծառայությունը կարող է կոտրել էլեկտրոնային փոստը: «Սուբյեկտը» (ընդհանրապես, որքան կոնկրետ ձևակերպված լինի սպառնալիքը, այնքան՝ լավ) կվարակի համակարգիչը այն վիրուսով, որն իրենց կտրամադրի բոլոր տվյալները: Նախորդ ցուցակի յուրաքանչյուր սպառնալիք պետք է գնահատել երկու չափորոշիչով.

հավանականությունը (1. ցածր, 2. միջին, 3. բարձր)

հետևանքների ծանրությունը (1. ցածր, 2. միջին, 3. բարձր)

«Որքանով է դա հնարավոր»՝ առաջին հարցը բոլոր սպառնալիքների համար: Ընդ որում, եթե նման բան արդեն իսկ պատահել է ձեզ հետ կամ ձեր բնագավառից որևէ մեկի հետ, ապա հավանականությունն ինքնըստինքյան բարձր է: Կարևոր է հաշվի առնել չարամիտների հնարավորությունները. եթե «խուլի-գանները» կկոտրեն էլեկտրոնային փոստը՝ սպառնալիքը, ըստ ամենայնի, կստանա ցածր հավանականություն, ապա «հատուկ ծառայությունները» կկոտրեն էլեկտրոնային փոստը՝ կունենա միջին և բարձր հավանականություն:

Յուրաքանչյուր սպառնալիքի հետ կապված հաջորդ հարցը հետևյալն է. «ի՞նչ անել, եթե դա տեղի ունենա: Ինչքանով է վատ իրավիճակը»: Ընդ որում պետք չէ չափազանցնել: Եկեք հետևանքները ծանր համարենք միայն այն դեպքերում, երբ դրանք կապված են կյանքի կամ առողջության կորստի, ազատագրվման, մեծ գումարային կորուստների, կազմակերպության աշխատանքի դադարեցման և նման այլ բաների հետ: Օրինակ՝ հարևան պետության հատուկ ծառայությունները կկոտրեն էլեկտրոնային փոստը (սպառնալիք 2/հետևանք 3), «սուբյեկտը» կվարակի համակարգիչը վիրուսով, որը կփոխանցի նրան բոլոր տվյալները (1/3), ես կկորցնեմ իմ համակարգիչը, սմարթֆոնը, համակարգչային կրիչը (3/2), «սուբյեկտը» կլսի իմ հեռախոսային խոսակցությունները (3/3):

Այժմ դուք ունեք սպառնալիքների ցանկը, որից յուրաքանչյուրը գնահատված է ըստ հավանականության և հետևանքի: Նման կերպ գնահատված սպառնալիքն էլ հենց ռիսկն է: Այժմ կարող եք նախադասակարգել ռիսկերը՝ մեծից մինչև փոքր: Մեր ենթադրվող օրինակում դա կձևակերպվի այսպես.

- «Սուբյեկտը» լսում է իմ հեռախոսային խոսակցությունները (3/3)
- Հարևան պետության հատուկ ծառայությունները կկոտրեն էլեկտրոնային փոստը (2/3)
- Ես կկորցնեմ իմ համակարգիչը, սմարթֆոնը, համակարգչային կրիչը (3/2)
- «Սուբյեկտը» կվարակի համակարգիչը վիրուսով, որը կփոխանցի նրան բոլոր տվյալները (1/3):

Բոլոր ռիսկերը, որոնք ունեն 3/3, 2/3 և 3/2 միավոր՝ բարձր են, 2/2, 1/3 և 3/1 միավորը՝ միջին, իսկ 1/2, 2/1 և 1/1՝ ցածր: Հարմար օգտագործման համար ռիսկերի գնահատման արդյունքները կարելի է տեսանելի պատկերել, օրինակ՝ «ռիսկերի մատրիցայի» տեսքով:

Մեր վերացական օրինակում առաջին երեք ռիսկերը բարձր են, չորրորդը՝ միջին: Համապատասխանաբար, լրագրողին կամ խմբագրությանը պետք կլինեն առաջին հերթին ուշադրությունը և միջոցները կենտրոնացնել առաջին երեքի վրա:

Միանգամայն հնարավոր է, որ ռիսկերի գնահատման արդյունքում ստացվի այնպես, որ բարձր ռիսկեր առհասարակ չլինեն: Պարտադիր չէ, որ բոլոր լրագրողների ու խմբագրությունների մոտ լինեն բարձր ռիսկեր, որոնց շտապ անդրադարձնալ է պետք: Նման դեպքերում միանգամայն ողջամիտ կլինի ընդունել միջին և ցածր ռիսկերը և «ոչինչ չանել»:

Ինչպե՞ս կառավարել այս ռիսկերը

Կա ռիսկերի ցուցակը, իսկ ինչպե՞ս հասկանալ մենք դրանցից որքանով ենք պաշտպանված և ի՞նչ է պետք անել պաշտպանվելու համար: Այս հարցերի պատասխանները մեզ կտա անվտանգության աուդիտը: Անվտանգության աուդիտն իրականացնելիս ինչ-որ մեկը կողքից դիտում է, թե ինչպես է ամեն ինչ աշխատում, թե ինչպես է ամեն բան կարգավորված լրագրողի սարքավորումներում/խմբագրությունում (ստուգում է համակարգիչներին, սմարթֆոններին, էլ. փոստի և այլնի կարգավորումները):

Արդյունքում, յուրաքանչյուր ռիսկի համար տրվում է եզրակացություն՝ պաշտպանված եք դուք դրանից, թե ոչ: Եթե ոչ՝ ի՞նչ է պետք անել բավականաչափ պաշտպանված լինելու համար: Այդ առաջարկությունների կատարման ընթացքում, որպես կանոն, մշակվում են անվտանգության ֆորմալ և ոչ ֆորմալ կանոններ («քաղաքականություն»): Օրինակ, որ այսուհետև ծածկագրերը պետք է լինեն այսպիսին կամ այնպիսին, ինչպե՞ս եք դուք պաշտպանում ձեր հաշիվները, որտե՞ղ եք պահպանում կարևոր տվյալները և ինչպե՞ս եք պաշտպանում դրանք, ի՞նչ միջոցներից եք օգտվում առավել կարևոր թեմաներով նամակագրություն վարելիս և այլն:

Բացի այդ, պետք է ունենալ գործողությունների ծրագիր, եթե որևէ դեպք պատահի: Ամենաքիչը, որ պետք է կարողանանք անել՝ իմանանք, թե ում դիմենք: Այս ամենը՝ ռիսկերի գնահատում, անվտանգության աուդիտ, առաջարկությունների կատարում, անվտանգության կանոնների մշակում և գործողությունների ծրագիր, եթե դեպքը տեղի ունենա, կոչվում է թվային անվտանգության ռիսկերի կառավարման գործընթաց

(պարզեցված տեսքով): Սա պետք է անել տարին մեկ անգամ, գումարած լուրջ միջադեպի ի հայտ գալուց անմիջապես հետո, եթե այդպիսին լինի:

Ինչպիսի՞ տարածված «տիպիկ» ռիսկեր կան լրագրողների համար, և որո՞նք են դրանք նվազեցնելու անվտանգության միջոցները

Տարածված ռիսկ 1. հատուկ ծառայությունները, հետաքննություններում ներգրավված անձինք, մրցակիցները, անբարյացակամ մարդիկ կկոտորեն էլ. փոստը և/կամ սոցիալական ցանցերում ձեր հաշիվները (Facebook, Twitter, ВКонтакте և այլն) և/կամ ֆայլային հոսթինգներում ձեր հաշիվները (Dropbox և այլն):

Անվտանգության միջոցներ

(էլ. փոստի համար) Օգտագործել այնպիսի փոստ, որը հետխորհրդային իրավասության ենթակա չէ (օրինակ Gmail):

Օգտագործել լավ ծածկագիր. երկար, ցանկալի է՝ 16 նիշից բաղկացած, որը չի պարունակում անձնական տվյալներ՝ ծննդյան օրեր, հարազատների անուններ, ընտանի կենդանիների անուններ՝ ոչինչ, որը կապ ունի ձեզ հետ:

Այն պետք է բացառիկ լինի բոլոր կարևոր հարթակների համար, այսինքն՝ էլ. փոստի այնպիսի ծածկագիր, որը ոչ մի այլ տեղ չի օգտագործվում:

Կարգավորումները պետք է կատարել ըստ տվյալների ճանաչման երկգործոն համակարգի, ընդ որում, ցանկալի է ոչ թե SMS-ի, այլ սմարթֆոնների համար նախատեսված ծածկագրերի գեներացման ծրագրի միջոցով (օրինակ՝ Google Authenticator՝ <http://bit.ly/2yVDfCL>).

Ձեր հաշվի կարգավորումներում ստուգեք դեպի հաշիվ մուտքը վերականգնելու միջոցները այն դեպքերի համար, եթե կոռուսնաք հաշվի ծածկագիրը: Որպես կանոն՝ դա էլեկտրոնային փոստի պահեստային հասցեն է (այդ հասցեն նույնպես պետք է լինի պաշտպանված և վստահելի), հեռախոսահամարը (լավ կլինի սա առհասարակ հեռացնել) և գաղտնի հարցը (նույնպես ճիշտ կլինի ջնջել):

Մուտք գործեք էլ. փոստը և այլ կարևոր հաշիվներ միայն պաշտպանված սարքերից (այս մասին՝ ստորև):

Ճանաչեք կեղծարար (phishing) նամակներն ու հաղորդագրությունները սոցիալական ցանցերում: Սա ինչ-որ մեկը պետք է ցույց տա և սովորեցնի, օրինակ՝ թվային անվտանգության թեմայով դասընթացների ժամանակ: Եթե խոսքը կորպորատիվ էլ. փոստի մասին է (օր.՝ vashlogin@adres-sayta.com), ապա կարևոր է հիշել, որ կազմակերպությունը պետք է ապահովի ընդհանուր կարգավորումներ բոլոր հաշիվների համար (սահմանել նվազագույն պահանջներ ծածկագրերի համար, բոլոր հաշիվների համար միացնել տվյալների ճանաչման երկգործոն համակարգ և այլն):

Եթե դուք չեք վստահում ինֆորմացիոն տեխնոլոգիաների գծով մասնագետներին և/կամ կազմակերպության ղեկավարությանը, ապա հատկապես զգայուն թեմաների շուրջ նամակագրությունը պետք չէ վարել աշխատանքային էլեկտրոնային փոստի միջոցով: Դրա համար ավելի լավ է ունենալ առանձին, անձնական և լավ պաշտպանված հաշիվ: Եթե խոսքն օրինակ Ֆեյսբուքի կորպորատիվ էջի մասին է, ապա դրա համար պաշտպանություն պետք չէ:

Էջի վարումը (ադմիններ, խմբագիրներ) պետք է իրականացնեն որքան հնարավոր է քիչ թվով օգտագործողներ: Էջի բոլոր վարողների անձնական հաշիվները պետք է պաշտպանված լինեն:

Տարածված ռիսկ 2. Հատուկ ծառայությունները, հետաքննություններում ներգրավված անձինք, մրցակիցները, անբարյացակամ մարդիկ կիսկեն, կգողանան, կվերցնեն համակարգիչը, սմարթֆոնը, համակարգչային կրիչը, արտաքին կոշտ սկավառակը:

Անվտանգության միջոցներ

Բոլոր սարքավորումներում միացնել սկավառակի լիակատար գաղտնագրումը: Այն դեպքերում, երբ սարքը կրկնի չարակամի ձեռքը, նա չի կարողանա ոչ կարդալ տվյալները, ոչ էլ փոփոխել դրանք: Ավելի լավ է օգտագործել օպերացիոն համակարգերում ներկառուցված միջոցներ սկավառակի լիակատար

ծածկագրման համար: Օրինակ՝ Windows 8, 10 Professional-ի համար դա BitLocker-ն է: Mac-ի համար՝ Filevault-ը՝ <http://apple.co/2ByOi7V>: Android սմարթֆոնների (ոչ բոլոր) կարգավորումներում պետք է գտնել «գաղտնագրել սարքը» կետը: iPhone-ը և iPad-ը գործարանային վիճակում արդեն իսկ գաղտնագրված են, բայց բնականաբար պետք է ունենալ ծածկագիրը էկրանը ապարդյունավորելու համար, որպեսզի այդ գաղտնագրումը իմաստ ունենա: Սարքերի գաղտնագրմամբ պետք է զբաղվեն SS մասնագետները: Տեխնիկապես դա այնքան էլ բարդ չէ, բայց երբեմն չնախատեսված իրավիճակներ են լինում:

Միշտ կողմավորեք հեռախոսն ու համակարգիչը, երբ դրանցից չեք օգտվում, նույնիսկ եթե «ընդամենը մեկ րոպեով» եք հեռանում դրանցից: Որպես կանոն դրա համար սմարթֆոնի վրա պետք է սեղմել միացման կոճակը: Windows-ով աշխատող համակարգիչների վրա՝ Win+L ստեղծների համադրությունը: Mac-ի համար՝ պարզապես փակեք այն, բայց մինչև այդ տվեք համապատասխան կարգավորումները այնպես, որ փակելիս այն անմիջապես բլոկավորվի:

Ունեցեք բոլոր կարևոր տվյալների պահեստային տարբերակները «ամպում» (cloud, օրինակ Dropbox, Onedrive, Google Drive), արտաքին կրիչների վրա կամ՝ թե՛ մեկում, և թե՛ մյուսում: Այս դեպքում ձեր սարքերի կորելու դպքում ձեզ համար կարևոր տվյալները կպահպանվեն:

Տարածված ռիսկ 3: Հատուկ ծառայությունները, հետաքննություններում ներգրավված անձինք, մրցակիցները, անբարյացակամ մարդիկ կգաղտնալսեն հեռախոսային խոսակցությունները, կգողանան SMS-ները և կհետևեն շարժական կապով ձեր գործունեությանը:

- Կարևոր բաների մասին հեռախոսով մի խոսեք: Երբեք երաշխավորված չեք, որ ձեզ չեն գաղտնալսում:
- Կարևոր բաների մասին SMS մի գրեք:
- Ձեզ հետ հեռախոս մի վերցրեք, եթե չեք ուզում, որ ձեր տեղաշարժին հնարավոր լինի հետևել բջջային կապի միջոցով կամ գոնե անջատեք հեռախոսը և հանեք SIM քարտը:

- Հեռախոսային զրույցների և SMS-ի փոխարեն զրույցների և նամակագրության նպատակով օգտագործեք պաշտպանված մեսենջերներ, ինչպիսիք են՝ WhatsApp-ը, Signal-ը, Wire-ը: Ընդհանուր առմամբ, համացանցի միջոցով զրույցն ու նամակագրությունն ավելի անվտանգ են, քան՝ հեռախոսով և SMS-ով:
- Փորձեք անմատչելի պահել Ձեր սարքերը վնասակար ծրագրերից (այս մասին՝ ստորև) և երրորդ անձի համար (տես՝ վերևում, սարքերը խլելու մասին):

Տարածված ռիսկ 4: Հատուկ ծառայությունները, հետաքննություններում ներգրավված անձինք, մրցակիցները, անբարյացակամ մարդիկ կվարակեն համակարգիչը, սմարթֆոնը վնասակար («լրտեսական») ծրագրով:

Համակարգչի վրա պետք է լինի արտոնագրված օպերացիոն համակարգ և այն պետք է ավտոմատ թարմացվի: Սմարթֆոններում օպերացիոն համակարգը նույնպես պետք է արդիականացնել:

Համակարգչում և սմարթֆոններում բոլոր ծրագրերը պետք է լինեն արտոնագրված, ավելորդ ծրագրեր պետք չեն ներբեռնել: Բոլոր ծրագրերը պետք է թարմացնել:

Համակարգչով դուք պետք է աշխատեք ոչ թե ադմինիստրատորի հաշվից, այլ սովորական օգտագործողի: Ձեր համակարգչի (Windows, Mac) և Android սմարթֆոնի վրա պետք է լինի հակավիրուս: Անվճար հակավիրուսային ծրագիրը միանգամայն բավարար է (Avast, Avira, AVG): Պետք չէ գողանալ հակավիրուսային ծրագիրը. դա անվտանգ չէ:

Android համակարգի սմարթֆոններում պետք է սեղմել կարգավորումներ և «անհայտ աղբյուրները» անջատել: Դա թույլ չի տա, որպեսզի ներբեռնվեն այն հավելվածները, որոնք Play Store-ում չեն գտնվում:

Այս ամենը Դուք ինքնուրույն դժվար թե կարողանաք անել: Որպեսզի սարքավորումները պաշտպանված լինեն վիրուսներից, անհրաժեշտ է մասնագիտական տեխնիկական աջակցություն:

Տարածված ռիսկ 5. Հատուկ ծառայությունները, հետաքննություններում ներգրավված անձինք, մրցակիցները, անբարյացակամ մարդիկ կկոտրեն WhatsApp-ի կամ Telegram-ի մեսենջերները:

Անվտանգության միջոցներ

Թե մեկի, և թե մյուսի համար սահմանեք մուտքային տվյալների ճանաչման երկգործոն համակարգ: Այդ դեպքում ձեր հաշիվ մուտք գործելու համար SMS-ից կողք գողանալը քիչ կլինի, քանի որ պետք կլինի նաև իմանալ ձեր ծածկագիրը:

Մեփական սարքավորումները պետք է պաշտպանել թե հափշտակումներից, և թե լրտեսական ծրագրերից (տես՝ վերևում):

Կարևոր է հասկանալ, որ մենք անդրադարձանք այն դիսկերին, որոնք «բնորոշ» են լրագրողների համար: Եթե խոսքը կազմակերպությունների (խմբագրությունների) մասին է, նրանց համար իրական են նաև դիսկերը, որոնք կապված են տեղական ցանցի (տեղական սերվերներ, ընդլայնված թղթապանակներ, մուտքի իրավունք և այլն) և ցանցային ենթակառուցվածքի (վեբ սերվերներ, կայքեր, կորպորատիվ էլեկտրոնային փոստ) հետ:

Տարբեր կազմակերպությունների մոտ ռիսկերը տարբեր են, այդպես է նաև լրագրողների դեպքում: Ուստի պետք չէ փոխառել այլ կազմակերպությունների և լրագրողների ռիսկերի գնահատման արդյունքները: Միշտ ինքնուրույն կատարեք ռիսկերի գնահատումը. չէ՞ որ դուք ձեր ռիսկերն եք կառավարելու, ոչ ուրիշներինը:

Նշումների համար



Dart center-ի նյութերով

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՎՄԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ



Ահաբեկչական գործողությունները Բեալանի դպրոցում 2004 թ.-ի սեպտեմբերի 1-ին, 2001-ի սեպտեմբերի 11-ի հարձակումները ԱՄՆ-ում, գնացքի պայթյունը Մադրիդում 2004 թ.-ին, 2011-ի կրակահերթը Նորվեգիայի Ութոյա կղզում ուսանողական ճամբարում. պատմության ողբերգական դեպքերի ցանկը ծավալուն է և օր օրի ավելի է ընդլայնվում: Այս և մյուս տարեթվերը, անվանումներն ու անունները երբեմն մեխվում են մեդիայի այն ներկայացուցիչների հիշողության մեջ, ովքեր հաճախ

նման դեպքեր են լուսաբանում՝ պատերազմ, ահաբեկչություն, ավիավթար, բնական աղետ, ծանր հանցագործություն:

Ջանգվածային ողբերգություններ լուսաբանող լրագրողները հաճախ են հանդիպում բարդությունների: Նրանք հնարավորություն ունեն առաջինն արձագանքել կատարվածին: Նրանք գործ ունեն ականատեսների, տուժածների և նրանց անփարատելի վշտի հետ: Ցանկացած արյունալի դեպք լուսաբանելիս նրանք կարծես մասնագիտական պատ են անցկացնում իրենց և այն մարդկանց միջև, որոնցից հարցազրույց են վերցնում: Ի վերջո նրանք պետք է կատարեն իրենց առջև դրված առաջադրանքը: Բայց ծանր կորուստներ կրած մարդկանց հետ շփվելուց հետո հենց այդ պատը կարող է օգնել լրագրողին հաղթահարել սեփական ցավի զգացումը՝ կապված իր տեսածի ու լսածի հետ:

Լրագրողները, որոնց ի սկզբանե սովորեցրել են զգացմունքայնություն չդրսևորել, ժամանակակից ռեպորտաժներում սկսել են փոխել իրենց մոտեցումները՝ ողբերգական դեպքերը լուսաբանելիս: Այնուամենայնիվ, ողբերգությունը տպավորիչ կերպով ներկայացնելու և միևնույն ժամանակ բարոյական նորմերի սահմանը չանցնելու նպատակով, լրագրողները պետք է նկատի ունենան մի քանի կարևոր հանգամանք:

2001 թ.-ի սեպտեմբերի 11-ից հետո Փոյնթերի Ջանգվածային լրատվամիջոցների ինստիտուտից (ԱՄՆ) Էլ Թոմֆկինսը գրել է. «Լրագրողները, ֆոտոլրագրողները, օպերատորները, ռեժիսորները հաճախ ձեռք ձեռքի տված աշխատում են փրկարարների հետ միասին: Լրագրողների մոտ տրավմատիկ սթրեսի ախտանիշները զարմանալիորեն նման են ողբերգությունների հետևանքների հետ առնչվող ոստիկանների և հրշեջների մոտ դրսևորվող ախտանիշներին: Սակայն լրագրողները նյութն ավարտելուց հետո սովորաբար չեն ստանում մասնագիտական օգնություն: Այն դեպքում, երբ հասարակական անվտանգության ոլորտի ծառայողներին նման դեպքերից հետո հոգեբանական աջակցություն է առաջարկվում որոշ երկրներում, լրագրողներին գրեթե անմիջապես մեկ այլ առաջադրանքի են ուղարկում»:

Խմբագրության անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է տեղեկացված լինի՝ ինչ անել տրավմայի դեպքում: Թիմի անդամները պետք է հասկանան, որ մարդիկ տարբեր կերպ են դիմակայում տրավմաներին, որ դրանց ազդեցությունը կարող է կուտակվել ժամանակի ընթացքում: Նրանք պետք է կարողանան կողմնորոշվել՝ երբ է, որ իրենք կամ իրենց գործընկերները կարիք ունեն ավելի ակտիվ ինքնօգնության: Մա վերաբերում է բոլոր աշխատակիցներին, այդ թվում՝ օգնականներին ու տեխնիկական անձնակազմին:

Տրավմատիկ վիճակին կարող են հաջորդել անքնությունը, մղձավանջը, դեպքերի անհանգստացնող պատկերները կամ դրանց մասին մտքերը, տրավմայի մասին հիշեցումներից խուսափելը, կանխազգացումը, որ ինչ-որ վատ բան է տեղի ունենալու, տեղից վեր թռչելը և ամեն հասարակ բանից անհանգստությունը: Տրավման հիշելիս՝ կարող են առաջանալ նաև ֆիզիկական ռեակցիաներ՝ քրտնարտադրություն, արագ սրտխփոց, գլխապտույտ, սրտխառնոց:

Երբ ողբերգական իրադարձություն էք լուսաբանում և զգում եք, որ դեպքերը ձեզ վրա մեծ տպավորություն են գործում՝ փոխելով ձեր բնականոն կյանքի ընթացքը, զգոն եղեք: Փորձեք զբաղվել մարմնամարզությամբ: Անգամ պարզապես քայլելը օգնում է ազատվել սթրեսից: Ընդմիջում արեք և ձեր գործընկերներին նույնպես հորդորեք անել նույնը: Դա կօգնի ավելի լավ յուրացնելու նյութը և կպարզեցնի միտքը: Փորձեք հասկանալ ձեր զգացմունքները, դա կօգնի դիմակայել տրավմային: Կիսվեք մտքերով ձեր գործընկերների հետ: Աշխատանքից հետո գրուցեք մեկի հետ, ում վստահում եք: Ընտրեք լսելու լավ ունակություն ունեցող մեկին: Օրվա ընթացքում զանգահարեք տուն և կապ պահպանեք ձեր սիրելիների հետ: Երկար մի նայեք դաժան տեսարաններին: Անհրաժեշտության դեպքում խնդրեք, որպեսզի ձեզ որևէ մեկը փոխարինի:



Եթե ծանր ապրումների մեջ եք, մի թաքցրեք: Նման արձագանքը մարդկային է, և դա ընդունելը թուլություն չէ և չի կարող սպառնալ ձեր կարիերային:

Որո՞նք են զգուշանալու նախանշանները

Եթե աշխատանքի ընթացքում նկատում եք, որ չեք կարողանում կենտրոնանալ, ցրված եք, դժվարանում եք պարզ գործողություններ կատարելիս, դարձել եք բռնկվող և չափից դուրս բարկացած, ուրեմն՝ ժամանակն է անհանգստանալ: Ուշադիր եղեք նաև, երբ ֆիզիկական կամ հոգեկան գերհոգնածություն եք զգում կամ պարբերաբար ունենում եք անալետության, անօգնականության, սարսափի, սեփական կյանքի համար վախի, ամոթի զգացում: Նման դրսևորումները վկայում են, որ ընդմիջման կամ շրջագայելու կարիք կա: Եթե դրանք շարունակվում են ավելի քան 3–4 շաբաթ կամ որևէ փուլում չափազանց ընդգծված են արտահայտվում, դիմեք մասնագետի օգնությանը:

«Ես հիմա ամեն մի թրխկոցից վեր եմ թռնում: Աժ բրիֆինգների սենյակում, որտեղ ասուլիսներն են տեղի ունենում, պատահել է, որ տեսախցիկ կամ ձայնագրիչ է ցած ընկնում, լրագրողներից նրանք, ովքեր 1999–ի հոկտեմբերի 27–ին՝ կրակոցների օրը (<http://bit.ly/2mFxMgj>), եղել են Աժ դահլիճում, միանգամից վեր են թռչում: Դա մի ահավոր բան էր, որ ապրեցինք ու շարունակում ենք վերապրել բոլորս»:
Գոհար Սարգսյան, լրագրող

Ողբերգական տեսարաններով պատկերների հետ աշխատելը

Պատերազմի, հանցագործությունների, արտակարգ իրավիճակների, բնական աղետների տեսարանները հաճախ ճնշող և ազդեցիկ են: Թեև այդ իրադարձությունները ներկայացնող լուսանկարներն ու տեսագրությունները բարձր փաստագրա-

կան և լրատվական արժեք ունեն, սակայն պետք է զգույշ լինել, քանի որ այդ նյութերը կարող են ռիսկի տակ դնել մարդկանց հոգեվիճակը:

2013թ.-ին Հոգեբանների ամերիկյան ասոցիացիայի փորձագետները հետտրավմատիկ սթրեսից բխող խանգարումների մասին ուղեցույցում արձանագրել են, որ տրավմատիկ պատկերների հետ տևական աշխատանքը լուրջ ռիսկային գործոն է լրագրողների, ոստիկանների և իրենց աշխատանքային գործունեության ընթացքում նման պատկերների հետ շարունակաբար առնչվող այլ անձանց համար:

Վերջին տասնամյակում տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ մեծացել է խմբագրությունների ստացած նյութերի ծավալը: Անգամ եթե իրադարձությունները հեռվում են տեղի ունենում, լրագրողները, որոնք խորանում են բռնություններով, բացահայտ ու դաժան տեսարաններով լի պատկերների և տեսանյութերի հորձանուտի մեջ, կարող են այնպիսի զգացողություն ապրել, կարծես այդ ամենը գտնվում է իրենց անձնական տիրույթում: Իբրև արձագանք, սովորաբար, ի հայտ են գալիս զզվանք, գերհուզվածություն և անօգնականության զգացում, իսկ աշխատանքից դուրս՝ կաշուն մտքեր և անքնություն:

Այս խորհուրդները կօգնեն լրագրողին թեթևացնել տրավման

Լավ հասկացե՛ք ինչի հետ գործ ունեք:

Մտածեք տրավմատիկ պատկերների մասին՝ ասես դա ճառագայթում է, թունավոր նյութ, որը կախվածության մեջ գցելու հատկություն ունի: Լրագրողներն ու մարդասիրական գործունեությամբ զբաղվողները, ինչպես միջուկային ոլորտի աշխատակիցները, ունեն իրենց առջև դրված հստակ աշխատանք, բայց միևնույն ժամանակ ողջամիտ քայլեր պետք է կատարեն անհարկի ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար: Դիտման հաճախականությունը կարող է առավել խնդրահարույց լինել, քան քանակը, ուստի մտածեք տրավմատիկ նկարների հոսքերի և դիտման ընդմիջումների մասին:



Նվազեցրեք ոչ անհրաժեշտ կրկնակի ազդեցությունը:

Վերանայեք նյութերը դասավորելու և նշելու ընթացակարգերը: Փորձեք այնպես կազմակերպել թվային ֆայլերի ու թղթապանակների հետ աշխատանքը, որ զերծ մնաք անհարկի դիտումներից: Երբ կատարում եք պատկերի նույնականացում՝ այն տարբեր աղբյուրների հետ համադրելով, կարևոր հատկանիշների մասին գրառումներ կատարելը կարող է օգնել, որպեսզի շատ հաճախ չդիտեք բնօրինակի հետ համեմատվող նկարները: Երբեք նյութը գործընկերոջը մի փոխանցեք՝ առանց նախազգուշացնելու, թե այնտեղ ինչ կա:



Փորձարկումներ արեք, թե ինչ հեռավորությունից կարելի է դիտել նկարները:

Որոշ մարդիկ գտնում են, որ օգտակար է կենտրոնանալ ինչ-որ դետալների վրա, օրինակ՝ հագուստի, և խուսափել այլ բաներից, օրինակ՝ դեմքից: Կարող եք ժամանակավորապես ծածկել նկարի առավել անհանգստություն պատճառող հատվածները: Արյունալի բախումներ պատկերող կադրերի հետ աշխատելիս մոտաժողները պետք է խուսափեն կրկնվող տեսարանների ֆունկցիայի օգտագործումից (loop play) կամ այն չափավոր օգտագործեն: Ունեցեք վերոհիշյալ խնդիրները հաղթահարելու ձեր սեփական մեթոդները:



Պատկերները նայելիս փորձեք հարմարեցնել միջավայրը:

Փոքրացնելով պատուհանը, փոփոխելով էկրանի պայծառությունը կամ տեսանյութի որակը, կարող եք նվազեցնել ընկալման ազդեցությունը: Երբ հնարավոր է, փորձեք անջատել ձայնը. երբեմն դա ամենաազդեցիկ մասն է:



Հաճախակի ընդմիջումներ արեք: Որևէ հաճելի բան դիտեք, շրջեք, ձգվեք կամ շփվեք բնության հետ (կանաչ տարածություն և մաքուր օդ): Այս ամենը կօգնի խլացնել գերհուզված վիճակը: Մասնավորապես խուսափեք քնելուց

առաջ ճնշող նկարների հետ աշխատելուց. այդ ժամերին դա ձեր հոգեկան վիճակի վրա ավելի ուժգին ազդեցություն կարող է ունենալ:

Օրվա ընթացքում փոքր-ինչ ննջելը լավ միջոց է առույգությունը պահպանելու համար, բայց մի ննջեք գիշերային քնին մոտ ժամանակահատվածում, քանի որ հետո դժվար կլինի քնելը: Ննջեք 10–20 րոպեի սահմաններում: Ավելի քան 20 րոպե ննջելը բավական է, որ առաջացնի քնի իներցիա՝ քնկոտություն, որն ի հայտ է գալիս 90 րոպեանոց քնային ցիկլի կեսին արթնանալիս:

Գրասենյակը, որտեղ աշխատում եք դաժան բռնությունների պատկերների հետ, պետք է դուրս նայող պատուհան ունենա, որտեղից երևում են ծառեր և բնության այլ տեսարաններ: Սա նույնպես կարող է ցրել կադրերում ներկայացվող բռնության ազդեցությունը:

Ձեր լավագույն աշխատանքային ժամերը նվիրեք ամենաբարդ նյութին:

Եթե ընտրության հնարավորություն ունեք, ավելի լավ է տրավմատիկ պատկերների հետ աշխատել օրվա այն հատվածում, երբ առույգ եք և ունակ կենտրոնանալու: Մեր ուղեղը պակաս արդյունավետ է ընկալում նյութը, երբ մենք հոգնած ենք:

Կազմեք ինքնօգնության ձեր սեփական ծրագիրը:

Ձեզ մոտ կարող է ցանկություն առաջանալ բարձր կարևորություն ունեցող պատմության վրա աշխատել երկու, երեք, չորս ժամ, անգամ ավելի շատ: Բայց կարևոր է ժամանակ թողնել նաև աշխատանքից դուրս շունչ քաշելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավելի դիմադրունակ են այն մարդիկ, ովքեր կանոնավոր մարզվում են, ունեն հետաքրքրություններ և նախասիրություններ, ժամանակ են հատկացնում սոցիալական շփումների համար: Կան լրագրողներ, ովքեր իրենք իրենց անաշխատունակ են դարձնում գերհոգնածության պատճառով:

Մտքերը թղթին հանձնելը նույնպես կարող է լավ ձև լինել հույզերը արտահայտելու և ձեզ համար կարևորի հետ վերահաղորդակցվելու համար: Եթե զգում եք, որ պատմությունը կլանում է ձեզ, կարծես ոչինչ այլևս նշանակություն չունի, դա ցուցանիշ է, որ պետք է հավասարակշռությունը վերականգնել:

Աշխատեք որպես թիմ:

Անկեղծ խոսեք գործընկերների հետ և փորձեք հասկանալ՝ ում վրա ինչն է ազդում և ինչպես: Մարդկանց հանդուրժողականության մակարդակը տարբեր է: Օրինակ՝ ձեր թիմում կարող է լինել մեկը, ում վրա ազդում է կենդանահերձումը կամ կենդանիների նկատմամբ դաժանությունը, բայց նա այնպես չի ազդվում վիրավոր երեխաների նկարներից, ինչպես մյուս գործընկերները, ովքեր երեխաներ ունեն: Համապատասխանաբար կատարեք աշխատանքի բաժանում:

Տարանջատեք աշխատանքը անձնական կյանքից:

Աշխատանքից դեպի սոցիալական կյանք անցումը կարող է դյուրին չլինել: Դժվար կլինի շփվել այն մարդկանց հետ, ովքեր հանգստանում և զվարճանում են, եթե նյութը, որի վրա աշխատել եք, դեռ խոռվում է ձեր միտքը: Մտածեք բուֆերային գոտի ստեղծելու մասին: Օրինակ, կարող եք այնպես կազմակերպել աշխատանքը, որ տրավմայի հետ կապ չունեցող կազմակերպչական գործերը կամ ոչ այնքան մեծ լարվածություն պահանջող հետազոտությունները օրվա վերջում կատարեք: Կարելի է տուն գնալիս գործի հետ կապ չունեցող որևէ բան անել: Որոշ մարդիկ նախընտրում են ֆիզիկական վարժանք, ասենք՝ հեծանիվով տուն գնալ կամ վազել: Դա առողջ բաժանաբար միջոց է աշխատանքի և կյանքի մյուս ասպարեզների միջև:

Խոսեք այդ մասին

Մի վախեցեք խոսել այն նկարների կամ բովանդակության մասին, որոնք ձեզ համար ծանր են: Հավանական է, որ ձեր գործընկերները նույնն են զգում, նույնիսկ եթե

չեն արտահայտվում: Խորհուրդներ տվեք ավելի երիտասարդ ու ոչ այնքան փորձառու գործընկերներին: Անկեղծ եղեք ծանր պատկերների հետ աշխատելիս. միասնականությունը և սոցիալական կապերը խնդիրները հաղթահարելու հիմնաքարերն են:

Եթե վերոնշյալ խորհուրդները օգտակար եք համարում կամ ինքներդ օգտակար հուշումներ ունեք՝ ինչպես կարելի է կարգավորել տրավմատիկ պատկերների օգտագործումը աշխատավայրում, կիսվեք դրանցով գործընկերների հետ:



Նշումների համար

[illegible]



Նիկոլայ Գրիգորյան

«Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի ղեկավար
Փրկարար ծառայության գեներալ-մայոր

ԵՐԲ ՎԱԽՆ ԻՆՁ ԱՅՑԵԼԵՑ, ԵՍ ԱՐԴԵՆ ՓՈՐՁԱՌՈՒ ԼՐԱԳՐՈՂ ԷՑ



Լուսանկարը Ն. Գրիգորյանի
անձնական արխիվից

Սպիտակի երկրաշարժն անակնկալի բերեց բոլորին՝ կառավարման մարմիններին, երեխաներին, մանկավարժներին, ինժեներներին, բժիշկներին, լրագրողներին, գյուղացիներին, բոլոր բոլորին խորհրդային անծայրածիր երկրում, մասնավորապես մեզ՝ հայերին։ Մենք երկրաշարժերի մասին երկու հազար տարվա գրավոր վկայություններ ունեինք, պատմիչների մանրակրկիտ ու ահասարսուռ նկարագրություններ և տեղե-

կություններ, որ Հայաստանի 12 մայրաքաղաքներն էլ ամբողջությամբ կամ մասամբ ավերվել են երկրաշարժերից, հայոց եկեղեցիներն ավելի շատ խոնարհվել են երկրաշարժերից, քան՝ թշնամիների ասպատակություններից։

Ես՝ մշեցի Գրե Արշակի թոռ Նիկոլայ Գրիգորյանս, որ արդեն ճանաչված հեռուստառադիո լրագրող էի, ոչ մի պատկերացում չունեի՝ ինչ է երկրաշարժը, ինչ հետևանքներ է ունենում՝ ֆիզիկական, սոցիալական, տնտեսական, հոգեբանական, բարոյական... Ինչպես է կառավարվում երկրաշարժերի հետևանքների վերացումը, ինչպես են այն լուսաբանում, ինչ է նշանակում արտակարգ իրավիճակի իրական պատկեր, և ինչպիսին պիտի լինի դրա արտացոլումը տեղեկատվական դաշտում։ Որն է լրատվամիջոցների դերը, ովքեր են փորձագետները, ովքեր են հերոսները, ով է մեղավոր, ով է պատասխանատու, ինչ է նշանակում ապրեցնող լրատվություն, ինչն է կատեգորիկ արգելվում ցուցադրել, ինչն է պարտադիր, կարևոր, անհրաժեշտ, հետաքրքիր ու փնտրված, ինչն է ճիշտ և ինչը սխալ, որոնք են կանոնները, և կան, արդյոք, այդ կանոնները։ Չկար այդ տեղեկատվությունը, չկար գիտելիքը, չկար փորձը։ Մենք երկրաշարժի գոտի մտանք անտեղյակ, անգրագետ, ոտաբորիկ ու սկսեցինք սովորել մեր սխալների վրա՝ աղետի գոտու ահասարսուռ պատկերը իր մանրակրկիտ դետալներով մանրադիտակի տակ բերեցինք եթեր. դիակներ ու մարմնի մասեր, անձայն ոռնացող տղամարդիկ, ողբ ու սուգ կապած կանայք, ձեռքերով հող փորող ու արտասովոր երեխաներ, դիակներ, դագաղներ, դիակներ, փլատակներ, դիակներ, եղբայրական գերեզմաններ, գլուխը կամ թևն ու ոտը պոկած տիկնիկներ, մանկական կոշիկ, այսուայնկողմ վազվզող խելակորույս մարդիկ... Ինքներս անպատրաստ էինք՝ ֆիզիկապես ու հոգեբանորեն, անպաշտպան ու խոցելի։ Փորձում էինք գտնել ամենաազդեցիկ ու տպավորիչ կադրերը, ամենաողբերգական պատմությունները, անցկացնում էինք մեր միջով, նույնականացնում մեր անձի, մեր ընտանիքի հետ, արտասովոր ու նույնականանում ամեն ողբացողի հետ, կիսում կորստի ցավը, կոտրվում անտանելի վշտից։ Ո՞վ էր այդքան դիակ տեսել, եղբայրական գերեզմանոցներ՝ դասա-

րաններով երեխաներ, կուրսերով ուսանողներ, անդազադ մեռելներ, հազարավոր դազադներ... Սովետի ժամանակ լրատվություն չկար, կար պրոպագանդա: Իսկ արտակարգ իրավիճակներ պատահում էին միայն կապիտալիստական երկրներում: Մեզ չէին սովորեցրել մահ ու ավերի լուսաբանումը, չէին նախազգուշացրել տարբեր տեսակի վտանգների մասին, չէին նախապատրաստել հոգեբանորեն, մենք չգիտեինք՝ ինչ սարսափելի հետևանքներ են ունենում, ինչ ավերներ են գործում զոհի ու տուժածի հետ նույնականացումն ու վերապրումը, այն էլ՝ ժամանակային մեծ կտրվածքով:

Ես անձնապես չէի հաշտվում Գրեի ցեղի՝ Արշակի ու իր եղբոր, Գրիգորյան ու Գևորգյան, հարյուրից ավելի հարազատների կորստյան հետ, հիմնականում կանայք ու երեխաներ: Որպես լրագրող, ներքին հոտառությամբ ու անձնական փորձով զգում էի, որ ամենասպասված ու ամենաապրեցնող նյութերը փրկության պատմություններն էին: Մարդկանց համար, այսօր լեզուս դժվար է պատմում դա արտաբերելը, մեծ ուրախություն էր փլատակներում իրենց հարազատի դին գտնելը: Ժամանակը կանգ էր առել, զգացմունքները քարացել էին, արցունքները ցամաքել, բանականությունն արգելափակվել էր, ասես դա մեզ չէր վերաբերում, այդ ամենը մեզ հետ չէր կատարվում: Ամբողջ աշխարհը մեզ օգնելու համար լցվել էր Հայաստան, և այդքան մեծ օգնության պատրաստակամությունն ուժ ու կորով էր տալիս: Մարդիկ մենակ չէին իրենց կորստի, վշտի ու ցավի հետ: Սա էլ տեղեկատվական կարմիր թել էր, որ անընդհատ բերում էինք մամուլ ու եթեր:

Ես ինձ համար որպես տպավորություն չէի առանձնացրել Լենինականի ստադիոնը՝ սավանով ու աղյալով ծածկված դիակներով: Բայց արի ու տես, հենց դա դարձավ այն հավաքական կերպարը, որ երկար ամիսներ գիշերներն ինձ այցի էր գալիս՝ մղձավանջի վերածելով տանջահար քուսս: Մահճակալիս տակից մեկը մյուսի հետևից դուրս էին գալիս ծածկոցները գլխներին գցած մարդիկ ու կիսակոր մոտենում էին ինձ: Արթնանում էի՝ ո՞վ ես, ո՞վ ես, իմ շնչահեղձ գոռոցներից: Էհ, էս աշխարհում ով երազ չի տեսնում, բոլորն էլ մղձավանջներ տեսնում

են, հետևից դնկնում են, չես կարողանում փախչել, ուզում ես գոռալ, ձայնդ չի գալիս և այլն: Հազար ու մի երազ ու պատկեր, մղձավանջային ու նույնիսկ հաճելի, բայց վեր էի թռնում մահճակալիս տակից ծածկոցավոր դիակների լուռ երթից ու իմ ձայնից: Տանը երեք մանկահասակ երեխա, քեզ մղձավանջից հրելով արթնացնող կին ու կողքի սենյակից նույն մտահոգ դեմքի արտահայտությամբ ներս վազող մայր: Ինչ բժիշկ, ինչ հոգեբան: Մայրս մի քսան օր հետո ինչ-որ «աչքի բժիշկ» էր բերել՝ աչքով տվածին բուժող, նավա հանող: Իմ բուռն ընդվզումից հետո մայրս նահանջեց, բայց ես անալիտիկ ուղեղս միացրեցի ու ելքը գտա. տեղափոխվեցի հյուրասենյակ ու քնեցի բազմոցին, որը տակ չունեի՝ հենված էր ուղիղ հատակին: Սկսեցի քնել անխռով քնով: Հա, լինում էին, ասենք, տեղական նշանակության արտակարգ դեպքեր՝ դիակ, ուրվական, անհայտ ծագման ահաբեկիչ-հրեշներ կամ հիմար իրավիճակներ, բայց դրանք հեշտությամբ հաղթահարում էի: Այնպես որ, երկու շաբաթաառողջ քնից հետո, տեղափոխվեցի իմ հարազատ ննջարանը: Ու քանի որ մահճակալիս տակ ահագին տարածք կար, այնտեղից դարձյալ սկսեցին դուրս գալ ծածկոցները գլխներին քաշած ուրվականները: Հաստ բառարաններով ու բազմահատորյակներով մահճակալս տակազրկեցի՝ այնպես զմուսեցի, որ նույնիսկ սողունը չէր անցնի, բայց նրանք անցան... Մի երկու շաբաթ հետո ես հանձնվեցի, և երկու ճակատով սկսվեց պայքարը գիշերային այցելուների դեմ: Կինս՝ բժիշկներ, անիմաստ դեղեր, մայրս՝ է՛լ տերտեր, է՛լ մոմ թափող, է՛լ բախտագուշակ, է՛լ գերեզմաններ: Հետո էդ երկու ճակատները միանում էին ու համատեղ ակցիաներ էին իրականացնում, որից իրենք էլ էին վախենում: Չգիտեմ, ծածկոցավորները վերջացան, դեղերն օգնեցին, մոմ թափելը, աղոթքները, թե՛ նոր տագնաալներ առաջ եկան, ոչ մեկը ճշգրիտ նշել չի կարող, բայց երեք-չորս ամիս անց ես այլևս գիշերային քողարկված մշտական այցելուներ չունեի, և իմ գոռում-գոչյունից ամբողջ տունը վեր չէր թռնում:

Երկրաշարժի ժամանակ ես վախ չեմ ապրել, կար ցավ, վիշտ, անհանգստություն, տառապանք, հուսահատություն, անօգնականություն, զսպվող հեկեկոց, զոռոցի վերածվող ան-

զուսպ լաց... Կյանքիս, առողջությանս համար երբեք չեմ անհանգստացել, երբեք չեմ վախեցել:

Ինչպես բոլոր անփորձ լրագրողները, ես էլ վախ չունեի, երբ սկսվեցին սահմանային բախումները, հետո՝ պատերազմը: Լուսաբանել եմ համարյա բոլոր շրջանների սահմանային բախումները, թե՛ եմ Գետաշեն, Շահումյան, Ղարաբաղի տարբեր շրջաններ:

Երբ վախն ինձ այցելեց, ես արդեն փորձառու լրագրող էի, այսինքն՝ նաև փորձն ունեի, թե ինչպես կարելի է այն հաղթահարել: Պատկերացրեք, ուղղաթիռով պատերազմական գոտում ես, տարբեր զենքերից կրակում են քեզ վրա, իսկ դու արդեն փորձ ունես՝ ինչպես է գետին թավալվում խփված ուղղաթիռը, եթե բախտդ բերում է ու չի պայթում-հրդեհվում-մոխրանում, ապա գոնե կողերդ կտրվում են, ատամներդ փշրվում են, ձեռքերդ վնասվում են, մի քիչ էլ քերծվածքներ ու վերջ: 90 թվի մարտին նման «բարեհաջող» վայրէջք կատարեցի Շահումյանում, ավելի փափուկ՝ Գետաշենում, իսկ հետո կամ գնդակոծում էին կամ ինքն իրեն փչանում էր: Իսկ դու պարզապես պարտավոր ես թռնել: 92 թվականից սկսած, երբ թռչող սարք էի նստում՝ ինքնաթիռ կամ ուղղաթիռ, հենց անիվները պոկվում էին գետնից, ինձ մոտ սկսում էր ներսս հոշոտել մի բնագդային ու անասնական վախ: Ոչ մի տրամաբանություն չէր աշխատում՝ ատամներս սկսում էին ցավել, կողերս՝ մղկտալ, գլուխս՝ պայթել: Նստատեղերից այնպես էի բռնվում, մատներս մտնում էին մետաղի մեջ, շունչս կտրվում էր: Ուղղության ամեն մի փոփոխություն, վերելք ու վայրէջք, օդային փոս ու անհարթություն, վախիս նույն վերածում էր խուճապի: Սկզբում դա փորձում էի հաղթահարել ակոհոլի հարվածային չափաբաժնով, բայց տեսա, որ արդյունք չի տալիս: Ալկոհոլը պոնկեպոունկ լցվում էր մինչև շուրթերս, իսկ սթափությունն ու ծայրահեղ լարվածությունն ինձ չէին լքում:

Երբ ասում են վախ, ես դա զգում եմ մաշկիս վրա, ավելի ստույգ՝ քիչ ավելի խորը. այն սկսում է գոտկատեղից, ողնաշարով բարձրանում վեր, շունչդ կտրվում է, սկսվում է կամազրկող խուճապը, հնարավոր է նաև քարացածություն: Երբ մահվան

սպառնալիքն այլևս ուրվական չէ, այլ աչքդ խցկվող իրական պատկեր, մի քիչ դժվար է միանգամից ժպիտով այն դիմագրավելը, վախը հաղթահարելը: Դրա համար ինքնատիրապետում, կորով ու փորձառություն է պետք, որը ձեռք է բերվում, դաստիարակվում է:

Երբ ես դեռ մահ ու ավեր չէի տեսել, կախվում էի ուղղաթիռի բաց դռնից, ուժակոծությունների ժամանակ, երբ բոլորը նկուղներ ու պատսպարաններ էին փախչում, ես բաց պատուհաններից հետևում էի՝ դրսում ինչ է կատարվում: Դիրքերում զգուշավոր չէի, ես վստահ էի, որ Աստծո ձեռքը իմ գլխին է, և ինձ ոչինչ չի պատահի: Սակայն, երբ աչքիս առաջ գրադը զրուցակիցներիս կյանքը խլեց՝ նրանց անճանաչելի դարձնելով, երբ հակառակորդի տանկերը դեմ հանդիման մեր դիրքերն ավերեցին, երբ զրահատեխնիկան ու մոջահեդներով համալրված հետևակը երեք կողմից շրջափակեց մեզ, ու դիպուկահարներն աշխատում էին անընդմիջում, երբ հակառակորդը նոնակների կարկուտ տեղալով՝ լցվեց մեր հարևան դիրքերը, երբ հոսպիտալներում անձեռուտ երիտասարդների թիվն աչքիս առաջ աճեց, երբ նաև գործի բերումով համարյա ամեն օր զոհված հերոսների թաղումների մասնակցեցի, հասկացա, որ ես նրանցից մեկն եմ, պարզապես՝ դեռ ողջ եմ: Ես ՆԳՆ լրատվական ծառայության ղեկավարն էի և կազմակերպում էի նաև պաշտոնական թաղումների նկարահանումները: Այդտեղ ես փորձեցի ինչքան հնարավոր է ազատագրվել նույնականացումից: Ոչ հնարավոր էր այդքան խմել և ոչ էլ տանել այդքան ցավը. զոհվածները հիմնականում երիտասարդներ էին՝ սևազգեստ երիտասարդ կին, կարմրած աչքերով երեխաներ, վշտից կորացած ծնողներ, քույր-եղբայր-հարազատներ-ընկերներ: Ամեն անգամ համարյա նույն պատկերը՝ պատվո պահակներ, ժպտացող երիտասարդի սևաժապավեն լուսանկար, մեղալներ, վշտաբեկ հարազատներ ու համազգեստով զինակիցներ, բազմամարդ գլխահակ երթ, ծաղկեպսակներ, հրաժեշտի արցունք քամող խոսքեր, դեմքեր, դեմքեր, դեմքեր ու պատվո համազարկ: Ինչքան էլ որ սովորեցի, սովորական չդարձավ. ամեն անգամ իմ երեխաներն էին որբանում, իմ ծնողներն էին աչքիս առաջ հալ-

վում, ամեն մեռնողի հետ մեռնում էի: Ամենասարսափելին այդ վերջին համազարկն էր: Վայրկյաններով գիտեի ու տեսնում էի, որ հիմա դա կլինի, բայց միշտ, ասես անակնկալի գայի՝ ամբողջ մարմնով ցնցվում էի, ու կրակոցներն իմ միջով էին անցնում:

Ժամանակից հզոր սպեղանի աշխարհում չկա: Ամենանեղ պահին սա միշտ պետք է հիշել: Գիշերը որքան էլ երկարի, նույնիսկ՝ բեվեռային լինի, միևնույն է՝ վերջ ունի, որին հաջորդում է լուսաբացը: Երկրաշարժի ժամանակ ամենաշատ երգվողը Զիվանու երգն էր՝ ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան, վիատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան:

Մյուս հզոր դեղը ցավի ու վախի դեմ՝ երգն է: Երբ ինքնաթիռը վեր ու վար էր անում, ես վախից երգում էի: Օրինակ, աղոթքն այդքան չի օգնում, որքան՝ երգը: Անձնական փորձից եմ ասում, ամեն անգամ սահման գնալիս կամ ավելի հեռուն, ես միշտ երգում եմ ու երգացնում բոլորին, նույնը՝ դիրքերում: Հավատացնում եմ՝ մարտական ոգին այնքան է բարձրանում, որ մարդիկ մերկ ձեռքերով պատրաստ են տանկերի դեմ գնալ, իսկ վախը հետին պլան է մղվում:

Մի երեք-չորս անգամ է վախը ինձ իրենով արել, ցավի տեսքով մտել ողնաշարս, կտրել շունչս, կամազրկել, ենթարկել խուճապի, ցանկացել եմ փախչել՝ ոտքերս չեն ենթարկվել: Գուցեն Աստծո նախախնամությունն էր այդ անգամ, որովհետև ով փախավ՝ մնաց Գրադի տակ: Վախ չունենալը խելքի բացակայության, վտանգը գնահատելու անկարողության նշան է: Ես էլ ջահել ժամանակ դեպքեր են եղել՝ ցույց եմ տվել, իբր չեմ վախենում: Անվախությունը նաև հզորագույն մոտիվացիայի արդյունք էր: Շարժման առաջին տարիներին հայ երիտասարդներից շատ շատերը պատրաստ էին զոհաբերել իրենց կյանքը: Ես էլ էի ինձ մատաղացու ձևակերպել: Հետո եկան վախերն ու դրանք կառավարելու հրամայականը և փորձառությունը: Քաջության, անվախության, վախի կառավարման հիմնական բաղադրիչներն են՝ բարոյահոգեբանական պատրաստվածությունը, ներքին մղումն ու կորովը, արտաքին մոտիվացումը, վտանգի ու ռիսկերի ճիշտ գնահատումը և պրոֆեսիոնալիզմը՝ առաքելության ու անելիքի հստակ գիտակցությամբ և կատարելիք

քայլերի հերթագայության իմացությամբ: Իսկ եթե վախն անորոշ է, արդեն թափանցել է ողնաշար, խորը շունչ քաշեք, ինչքան հնարավոր է շատ և դուրս փչեք վախը, հետո նորից ու նորից, խորը երկար ներշնչում՝ վերցնում ենք կորով, քաջություն, խիզախություն, տղամարդկություն ու դուրս ենք փչում՝ վախ, անհանգստություն, թուլություն: Ընդամենը մեկ, լավ, ամենաշատը երկու բաղադրիչ վախը ձերն է, բայց դուք այլևս վախիկը չեք: Դուք արդեն կառավարում եք այն: Ոչ մի վախ չի կարող ինձ հետ պահել իմ առաքելությունն իրականացնելիս: Վախկոտ լրագրողը վախկոտ զինվորից վատ է: Վախով հնարավոր չէ վտանգ ու արգելք հաղթահարել, տուն ու հայրենիք պահել:



Էդիկ Բաղդասարյան
Հետք-ի գլխավոր խմբագիր

ՄԵՓԱԿԱՆ ԵՐԿՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄ ԼՈՒՍԱԲԱՆԵԼԸ ԱՄԵՆԱԴԺՎԱՐ ԲԱՆՆ Է



Լուսանկար՝ Փեղամ Վարդանյանի

Ես երբեք չեմ մտածել իմ ֆիզիկական անվտանգության մասին, ուղղակի միշտ մտածել եմ, որ այնտեղ պիտի լինեմ և վերջ: Վերջերս սկսել եմ ավելի շատ մտածել այդ հարցերի մասին, քանի որ կոորդինացնում եմ Հետքի աշխատանքները և իմ բազմաթիվ աշխատակիցների համար պատասխանատվություն եմ կրում:

Մեր աշխատակիցներից շատերն անվտանգության թեմայով տարբեր դասընթացների մասնակցեցին: Կարծում եմ, որ

պետք է իմանալ բոլոր օրենքներն ու կանոնները: Թե որքանով կկարողանան հետևել դրանց, արդեն այլ խնդիր է:

Եթե լրագրողը որոշել է, որ պետք է գնա թեժ կետ, ուրեմն նա հասկանում է բոլոր վտանգները, դա իր որոշումն է: Շատ դեպքերում ինքնապաշտպանությունը բնագոյային մակարդակում է, հաճախ չես էլ մտածում, այլ ուղղակի անում ես: Երբ կողքիդ մարդը վիրավորվում է, դու փորձում ես օգնել նրան, այլ ոչ թե մտածում ես քո անվտանգության մասին:

Եթե արդեն հասել ես դեպքի վայր, ուրեմն պետք է լուսաբանես: Վտանգը կարող է անսպասելի լինել, և, իհարկե, պետք է զգույշ լինել:

Մեփական երկրում պատերազմ լուսաբանելը ամենադժվար բանն է: Դասընթացներին խորհուրդներ տալը հեշտ է, բայց իրական կյանքում, ամեն ինչ մի փոքր այլ է:

Երբ այնտեղ պատերազմ է, դու պետք է այդտեղ լինես: Իրականում, իմ դեպքում դա էգոիզմի դրսևորում է: Թիկունքում թողնում ես ընտանիքդ, հարազատներդ ու, քեզ լավ զգալու, ինքդ քեզից գոհ մնալու համար մեկնում ես պատերազմ: Մեծ տղաս ծնվել էր արդեն: Ես 29–30 տարեկան էի: 1990–91 թթ. Արցախ գնացի որպես լրագրող: Արցախից Հանրային հեռուստատեսության «Հայուր» ծրագրի համար ռեպորտաժներ էի պատրաստում: Հետո ընտանիքիս տեղեկացրի, որ մնալու եմ, չեմ վերադառնալու: Մտա Մոնթեի ջոկատ: Մինչև 1994 թվականի ձմռան կոիվների ժամանակ Արցախում եմ եղել որպես լրագրող: Ռազմական գործողությունների ժամանակ մի քանի ամիս մնացել եմ հիմնականում Մարտունիում, նաև Մարտակերտում: Այդ ժամանակ արդեն՝ որպես զինվոր:

Պատերազմը գրքերով, տեքստերով, պատմելով հնարավոր չէ ներկայացնել: Իրականում այն բոլորովին ուրիշ է՝ առաջին մարտ, առաջին հանդիպումը հակառակորդի հետ, պատերազմի դաշտում անցկացրած առաջին գիշերը: Պատերազմում ես հերոսականությունը չեմ տեսնում, այլ՝ ողբերգականը: Երբ մամուլում հերոսների հերոսականության մասին են գրում, դրա հիմքում էլ ողբերգությունն է: Տղան հերոսանում է՝ իր ընտանիքը կործանելով, իսկ իրական ողբերգու-

Նշումների համար

[illegible]

Պատերազմում նաև ժուռնալիստիկայի բոլոր կանոնները, սկզբունքներն են խախտվում: Պատերազմի լուսաբանման շատ գրքեր ու ձեռնարկներ կան, բայց այդ բոլորն ուրիշի պատերազմների մասին են: Մեփական պատերազմը լուսաբանելու մասին ձեռնարկ չկա: Շատ հեշտ է գնալ Սիրիա ու պատերազմը լուսաբանել, բայց դա քո՝ պատերազմը չէ: Քո պատերազմը լուսաբանելիս խախտում ես բոլոր կանոնները, անգամ՝ էթիկայի, որովհետև պատերազմող կողմերից մեկը դու ես: Չսիրելու բան է պատերազմը: Ոչ մի սերունդ չի ուզում, որ իր հաջորդը պատերազմ տեսնի, բայց մեր զավակներն էլ տեսան:



Մառա Խոջոյան ՉԼԻՆԵԼ ՄՍԻ ԿՏՈՐ



Լուսանկարը՝ Մաքս Ավդենի

Բրիտանացի լրագրող Օլիվեր Քերոլը վերջին տարիներին ինտենսիվորեն լուսաբանել է ուկրաինական իրադարձություններն ու հետաքրքիր, նաև օգտակար փորձ է ձեռք բերել:

Դոնեցկում մի միջադեպ տեղի ունեցավ. ինձ առևանգեցին որոշ ժամանակով, շատ երկար չէր, մոտ 7-8 ժամ: Սարսափելի էր: Ահա թե ինչու է կարևոր, որ մարդիկ իմանան՝ որտեղ եք:

Իդեալական է, երբ խմբագիրը գիտի ձեր տեղը, ցանկալի է, որ այլ մարդիկ էլ իմանան: Օրինակ, եթե օտարերկրյա թղ-

թակից եք, ապա, ձեր գործընկերները, ասենք, Լոնդոնում կամ Նյու Յորքում պետք է իմանան՝ երբ եք հերթական անգամ կապվելու իրենց հետ, ու, եթե ըստ պայմանավորվածության տեղեկություն չունենան ձեր մասին, տագնապ հնչեցնեն:

Երբեմն սպասումն ավելի բացասական երանգներով է լինում, քան իրականությունը, սակայն նախապատրաստվելը միշտ պետք է: Դուք չեք կարող պատրաստ լինել բոլոր իրավիճակներին, բայց մտքում պետք է որոշակի սցենարներ ունենաք: Պատերազմի լրագրողի համար շատ կարևոր է ամեն ինչ հստակ ծրագրելը: Պետք է հեռախոսահամարներ ու նույնականացման նշաններ թողնել մեկի մոտ, ով կհետևի ու ծրագրից շեղման դեպքում քայլեր կձեռնարկի:

Պետք է ծանրություն անել ամեն ինչ. կան հետազիծ ցույց տվող GPS սարքեր, սակայն, եթե հակամարտության մասնակիցները տեսնեն դրանք, հնարավոր է՝ կարծեն, թե լրտես եք:

Ընդհանուր առմամբ, պատերազմական իրավիճակներում պետք է առաջնորդվել «արդյոք ռազմական գործողություններին մոտ լինելը արդարացված է» սկզբունքով: Միշտ հարց տվեք ինքներդ ձեզ՝ արդյոք իսկապես արժե մոտենալ թեժ կետերին: Եթե գրող լրագրող եք, ապա, ըստ էության, կարիք չունեք հենց շփման գծում լինելու, քանի որ տեղեկություններ կարող եք ձեռք բերել դրանից շատ հեռու վայրում, որտեղ և կայացվում են որոշումները:

Եթե կարծում եք, որ այն, ինչ լուսաբանելու եք, զգալիորեն վտանգելու է ձեր կյանքը, մի լուսաբանեք: Շատ քիչ պատմությունների համար արժե (եթե առհասարակ արժե) կյանքը վտանգել:

Ես ընդհանրապես չեմ սիրում դիսկի դիմել, բայց սովորաբար շրջապատված եմ լինում մարդկանցով, որոնք սիրում են: Իհարկե, լրագրողական նյութ ունենալու համար պետք է դիսկի դիմել: Սակայն կարևորը խմբի ներսում համաձայնությունն է, երբ ինչ-որ մեկը վստահ չէ, ուրեմն ոչ մեկը չի գնում: Ու խաղի կանոնների մասին պետք է պայմանավորվել նախապես:

Դոնեցկում ամենավատ զարգացումներից էի վախենում: Ինձ պահում էին մի վայրում, որ կոչվում է մեկուսարան՝ զինվո-



րական գորամասի վերածված հին արվեստի կենտրոն էր: Գիտեի՝ ինչեր են տեղի ունեցել այնտեղ: Խոշտանգումների մասին պատմություններ էի լսել և, բնականաբար, չէի կարող այդ ամենը մտքիցս հանել:

Միաժամանակ անհանգիստ էի ամերիկացի գործընկերոջս անվտանգության համար, քանի որ նրան լրտեսի տեղ էին դրել ու տեղափոխել էին այլ մեքենայով:

Իմ անվտանգության համար էլ էի շատ անհանգիստ: Ինչոր պահի շնչառությունս դժվարացել էր, բայց հետո որոշեցի խոսել հետները: Այս խորհուրդը շատ էի լսել՝ այնպես արա, որ քո մեջ մարդ տեսնեն, ոչ թե մսի կտոր: Հենց սկսես զրուցել, ձեր միջև կապ կհաստատվի: Սկսեցի խոսել ֆուտբոլից, ու զրույցը ստացվեց: Նրանք ինձ ազատ արձակեցին:

Ես միշտ ապահովագրվում եմ, անպայման, միշտ, միշտ, միշտ:

Անկեղծ ասած՝ կարծում եմ, որ սա պետք է լինի խմբագրության պատասխանատվության ներքո, լրագրողը չպետք է վճարի իր ապահովագրության համար: Բայց եթե այնպես է ստացվում, որ լրագրողը ստիպված է ինքն անել դա, ուրեմն չպետք է վարանի: Ինքս միշտ իմ սեփական միջոցներով եմ ապահովագրվել:

Կարծում եմ՝ հնարավոր է հայրենասիրությունը մի կողմ դնել: Ուկրաինայում լրագրողներ կան, որ իրենց գործով են դա ապացուցել: Օրինակ՝ Hromadske հեռուստաընկերության արտասովոր թիմը: Նրանց աշխատակից Նաստյա Ստանկոն Ուկրաինայում խնդիրները քննադատող ամենալավ լրագրողներից է, չնայած ուկրաինական դիրքորոշում ունի, քանի որ ամուսինը ազատամարտիկ էր կամավորական գումարտակներից մեկում:

Չեմ կարծում, որ ուժով պարտադրված հավասարակշռությունը կաշխատի, բայց բոլորը պետք է ջանան իրենց կարծիքն իրենց պահել, ներկայացնել փաստերն ու ձգտել լավագույնս պատկերացնել այն մարդկանց կյանքը, ում չեն հասկանում:

Որոշեք՝ թղթակից եք ուզում լինել, թե՞ հայրենասեր: Հայրենասեր եղեք՝ որպես լրագրող ազնիվ աշխատելով ու իշխանություններին հաշվետու դարձնելով այնտեղ, որտեղ գտնվում եք:

Ամեն մարդ յուրովի է պատկերացնում իր նյութն ու դրա հետ աշխատանքը: Մակայն միշտ պետք է շատ զգույշ լինել պատերազմական իրավիճակներում, քանի որ մարդիկ հետպատերազմական տրավմատիկ սթրես են ունենում, ու կան հարցեր, որոնք նրանց չարժե ուղղել:

Թույլ տվեք մարդիկ իրենք խոսեն, խնդրեք նրանց պատմել՝ ինչ է եղել, ինչ են տեսել, ինչ են զգացել: Կորզեք տեղեկությունները նրանցից, մեղադրող հարցեր մի տվեք, ասենք՝ ինչու չեք ասել ուկրաինացիներին, որ այստեղ պայքարողների խումբ կար: Փորձեք այնպես անել, որ իրենց ավելի հարմարավետ զգան:

Պետք չէ փոխել մարդկանց իրական տվյալները, եթե դրա կարիքն իսկապես չկա: Ես երբեմն փոխել եմ ամսաթվերը, նկարագրական որոշակի տվյալներ, որոշակի նույնականացնող առանձնահատկություններ:

Մտածեք՝ ինչը կարող է ձեզ սահմանափակել՝ ֆիզիկական տվյալները, անվտանգության հարցերը: Մտածեք ձեր նախապաշարմունքների մասին ու հիշեք դրանք: Ի մի բերեք՝ ինչ գիտեք, ինչ չգիտեք, և ինչը, հնարավոր է, չգիտեք էլ, որ չգիտեք:

media.am «Խաչմերուկ»



Սառա Խոջոյան

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Լուսանկարը Wikimedia-ից

Լրագրողների կյանքը, առողջությունը կամ սարքավորումներն ապահովագրելը շատ լրատվամիջոցների ու ազատ լրագրողների պարտադիր անելիքների ցանկում են:

Անվտանգ լրատվության միջազգային ինստիտուտը ընդհանրացնում է լրագրողներին անհրաժեշտ ապահովագրության տեսակները երեք խմբում.

- Ճամփորդական ու առողջապահական անձնական ապահովագրություն
- Սարքավորումների ապահովագրություն

- Կյանքի ապահովագրություն՝ մահվան կամ հաշմանդամության դեպքում:

1993-ին Ռուսաստանում ապստամբության ժամանակ օպերատոր Ռորի Փեքի սպանությունից հետո ստեղծվեց Rory Peck Trust-ը, որն անվտանգ լրագրության մշակույթի ջատագովներից ու նպաստողներից է: Այն ավելի մանրամասն ցանկ (<http://bit.ly/2D2RVDr>) է ներկայացնում՝ ինչն ապահովագրել և ինչու: Ապահովագրություն ընտրելիս կազմակերպությունը խորհուրդ է տալիս ուշադրություն դարձնել բազմաթիվ մանրամասների, օրինակ, թե պայմաններով ինչ առողջապահական կենտրոն է նախատեսված ու որքան հեռու է այն դեպքի վայրից: Կամ՝ ինչ պայմաններ են գործում դիակի վերադարձի համար: Խորհուրդ է տրվում մտածել՝ վիրավորվելու պարագայում որքան աջակցության կարիք կլինի ու որքան ժամանակ: Rory Peck Trust-ն առանձնացնում է նաև առևանգման ու փրկագների համար ապահովագրությունը:

Անվտանգ լրատվության միջազգային ինստիտուտը շատ է կարևորում ճիշտ ապահովագրություն ընտրելու հանգամանքը՝ որպես հետագա բազմաթիվ խնդիրներից խուսափելու հնարավորություն: Դրա համար, ըստ կազմակերպության, պետք է անհրաժեշտ ժամանակ հատկացնել ու ծանրութթն անել ճամփորդությանը կամ հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքները:

Մեդիա ոլորտի առաջատար համարվող լրատվամիջոցները սովորաբար իրենք են հոգում իրենց լրագրողների անվտանգության ու ապահովագրության խնդիրը: Օրինակ՝ BBC-ն լրագրողներին վտանգ պարունակող առաջադրանքի ուղարկելիս ապահովագրում է նրանց առողջությունը, ինչպես նաև ապահովում է առաջին օգնության փաթեթով ու անվտանգության պարագաներով՝ զրահաբաճկոնով, սաղավարտով և այլն: Իսկ ճամփորդության ապահովագրության համար BBC-ի լրագրողները վճարում են անձնական միջոցներից:

Սակայն սովորաբար համաշխարհային համարում ունեցող լրատվամիջոցները ապահովագրում են միայն իրենց աշխատակազմի անդամներին, իսկ իրենց տեղական թղթակիցներին կամ ազատ հիմունքներով իրենց համար նյութեր պատրաս-

տողներին՝ ոչ: Ազատ լրագրողները հիմնականում իրենք պետք է հոգան իրենց ապահովագրության խնդիրը:

Rory Peck Trust-ը ներկայացնում է 7 կազմակերպություններ, որի մի ցանկ (<http://bit.ly/2BwzBID>), որոնք ապահովագրություն են տրամադրում հենց ազատ լրագրողներին: Լրագրողների պաշտպանության խորհուրդն առանձնացնում է նման 5 կազմակերպություն (<http://bit.ly/2oQFuYz>):

Insurance for Journalists նախաձեռնությունն ապահովագրության համար աշխարհի երկրները բաժանել է 5 գոտիների (<http://bit.ly/2Be4fUa>), որոնցից ամենավտանգավորը անվանել է Էքստրեմալ: Այս գոտու երկրներից են Սիրիան, Ուկրաինան, Իրանը, Ռուսաստանը, Աֆղանստանը և այլն: Հայաստանը գտնվում է միջին գոտում, ինչպես մեր հարևաններ Ադրբեջանն ու Թուրքիան, Վրաստանը՝ ամենացածր՝ անվտանգ գոտում է: Insurance for Journalists-ի ծառայությունները կազմել են հենց լրագրողները՝ լրագրողների համար:

Անվտանգ լրատվության միջազգային ինստիտուտը Սիրիայի, Իրաքի ու Մալիի համար առաջարկվող ապահովագրական առաջարկների մի ցանկ (<http://bit.ly/2yXSyuE>) է առանձնացնում, որտեղ երկու շաբաթվա առաջարկը տատանվում է 70–700 ֆունտ ստերլինգի սահմաններում (40 հազարից 400 հազար դրամ):

Այժմ աշխարհում առաջարկվող լրագրողական ապահովագրության ամենամատչելի տարբերակներից են Լրագրողներ առանց սահմանի կազմակերպության փաթեթները՝ (<http://bit.ly/2BwkNDR>) օրական մոտ 2,7 դոլարի կամ եվրոյի չափով:

Վտանգավոր գոտիներում մասնագիտական գործունեության համար ապահովագրությունից զատ՝ ազատ լրագրողների համար գործում են նաև իրավական շատ հարցերի դեպքում պաշտպանություն ունենալու ապահովագրական առաջարկներ¹ (<http://bit.ly/2yWqyYF>): Դրանցից մեկն է վնասի փոխհատուցման պահանջի հետ գործ ունենալու համար նախատեսված ապահովագրությունը: Ազատ լրագրողները կարող են ապահովագրվել նաև պատվիրատուի՝ պայմանագիրը խզելու, գրագողության համար մեղադրվելու դեպքերի դեմ և այլն:

Նշումների համար



Գայանե Մկրտչյան

ՍԱՐԻ ԹԱՂԻ ԴԱՍԵՐԸ. ԻՆՉ ԱՆԵՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Վերջին տարիներին Հայաստանում բողոքի ակցիաների, հանրահավաքների լուսաբանման ժամանակ լրագրողների հանդեպ տեղի ունեցած բռնությունները խմբագրությունների կողմից լրագրողների ապահովագրման անհրաժեշտություն են առաջացնում:

Ըստ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2016թ. երրորդ եռամսյակային (հուլիս–սեպտեմբեր) զեկույցի՝ Երևանի Խորենացի փողոցի ու Սարի թաղի հուլիսյան իրադարձությունների ժամանակ ֆիզիկական բռնության է ենթարկվել 19 լրագրող և օպերատոր: 2015 թվականին #ElectricYerevan–ին բռնության է ենթարկվել 14 լրագրող և օպերատոր:

Հուլիսի 29–ին Սարի թաղում երթի ժամանակ լուսաձայնային նոնակի պայթյունի հետևանքով ոտքերի և ձեռքի բեկորային վնասվածքներ ստացած «Ա1+»–ի լրագրող Ռոբերտ Անանյանը նշում է, որ Հայաստանում որևէ խմբագրություն չունի այնպիսի համակարգ, որտեղ լրագրողները ապահովագրված են, սակայն լրագրողների մասնագիտական կյանքն ապացուցում է, որ նման համակարգի ներդրման անհրաժեշտություն կա: Նրա դիտարկմամբ՝ խոսքը վերաբերում է ոչ միայն ապահովագրությանը, այլև հանդերձանքին, քանի որ շատ դեպքերում, գնալով որևէ հանրահավաք կամ բողոքի ակցիա լուսաբանելու, լրագրողները չեն կարող ենթադրել, որ այն կարող է ավարտվել ոստիկանների կողմից պայթուցիկների կիրառմամբ:

«Հայաստանում լրագրողը բռնության է ենթարկվում, հայտնվում է հիվանդանոցում, և պետությունն ինքն է հոգում ծախսերը, քանի որ ինքն է բռնության ենթարկել, ինչպես եղավ իմ դեպքում: Բայց հնարավոր է՝ հրաժարվի այդ գործառույթը իրականացնելուց, և այդ բոլորը ծախսերը կմնան լրագրողի վրա: Հիմք չկար մտածելու, որ Սարի թաղի դեպքերի ժամանակ իմ աչքը դուրս չէր գա, կամ ես այլ ծանր վնասվածք չէի ստանա: Հայտնի չէին հետևանքները, ու ես՝ միջին աշխատավարձ ստացող լրագրողս, ինչպե՞ս պետք է փակեի ծախսերը, կամ ո՞վ էր փոխհատուցելու: Իմ խմբագրության՝ «Ա1+»–ի աջակցությունը միշտ եմ զգացել՝ թե՛ ֆինանսապես, թե՛ բարոյապես: Խմբագրությունն ինձ միայնակ չի թողել երբեք, չի ասել՝ մենք քեզ չենք ապահովագրել, գնա քո գլխի ճարը տես: Բայց ես հարցը դիտարկում եմ մշտական ապահովագրության դաշտում», — ասում է Ռոբերտ Անանյանը:

«Հետքի» գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը նշում է՝ լրագրողների ապահովագրություն Հայաստանի մեղիա դաշ-

տում չի իրականացվում, քանի որ լրատվամիջոցները չունեն այդքան ֆինանսական միջոցներ, հարցն անգամ չի քննարկվում խմբագրություններում: Ըստ նրա՝ աշխարհում շատ քիչ լրատվամիջոցներ ունեն այդ ապահովագրությունը, գուցե միայն աշխարհի խոշորները:

«Շատ կամավոր լրագրողներ են իրենց միջոցներով, առանց ապահովագրության մեկնում պատերազմական գոտիներ աշխատելու, խոշոր լրատվամիջոցներից շատերը սկսում են նյութեր գնել նրանցից՝ առանց սեփական լրագրող պահելու: Մեր լրագրողները գիտեն, որ ապահովագրված չեն, բայց գնում և աշխատում են թե՛ կետերում: Մենք պաշտպանիչ բաճկոններ նույնպես չունենք: Չեմ կարծում, որ անգամ մոտ ապագայում, կունենանք ապահովագրություն. քանի դեռ երկիրն այս վիճակում է, ես չեմ տեսնում, թե ինչպես է հնարավոր դա անել», — ասում է «Հետքի» խմբագիրը:

«Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի բյուրոն վերջերս է պաշտպանիչ բաճկոններ ձեռք բերել իր լրագրողների համար: Ռադիոկայանի բյուրոյի տնօրեն, գլխավոր խմբագիր Սիրանուշ Գևորգյանը նշում է, որ արդեն երկու տարի է լրագրողները հարձակման են ենթարկվում բողոքի ակցիաները ցրելու ժամանակ՝ չնայած բոլորը գիտեն, որ նրանք լրագրողներ են, անընդհատ դեպքի վայրում են ու աշխատում են տեխնիկայով:

«Որոշեցինք գոնե պաշտպանիչ հանդերձանքով ապահովել նրանց: Դրանց վրա մեծ տառերով գրված է «Press»: Ունենք բավարար քանակություն, որպեսզի դեպքի վայրում աշխատող լրագրողներն ու օպերատորները կրեն այն: Ոստիկանությունը ցույցը ցրելիս օգտագործում է այնպիսի միջոցներ, որոնք բեկորային վնասվածքներ են առաջացնում: Ու հիմա, եթե կրեն այդ պաշտպանիչ հանդերձանքը, վստահ չեմ՝ որքանով կօգնի, բայց գոնե կտեսնեն, որ լրագրող է ու աշխատում է դեպքի վայրում: Իհարկե, նաև չենք կարող ասել, թե 100%-ով ապահովում ենք մեր լրագրողների անվտանգությունը», — ասում է «Ազատություն» ռադիոկայանի երևանյան բյուրոյի տնօրենը՝ ավելացնելով, որ իրենք չեն ապահովագրում իրենց լրագրողներին:

Սարի թաղի դեպքերի ժամանակ քաղաքացիական հագուստով անձինք՝ մոտ 8 հոգի, փայտե հաստ ձողերով ծեծի էին ենթարկել «Lragir.am»-ի թղթակից Մարութ Վանյանին, ինչի արդյունքում լրագրողը ստացել էր աջ ոտքի սալջարդ, մարմինն ամբողջովին պատվել էր կապտուկներով: Վանյանը հասցրել էր միայն ձեռքերով և ուսապարկով պահել դեմքն ու կրծքավանդակը, ինչի արդյունքում էլ ամբողջ հարվածները ստացել էր ձեռքերին և ոտքերին:

«Որքան էլ ուզում ես պաշտպանիչ բաճկոն ու սաղավարտ հագիր, եթե զորքը հարձակվել է վրադ ու ծեծում է, դա քեզ չի փրկելու: Դեպքից հետո ինձ աջակցել է խմբագրությունը, ընկերներս: Ոչ մեկը չի փոխահատուցել, ես ինքս եմ իմ հիվանդանոցային ծախսերը հոգացել: Հայաստանի խմբագրությունները չունեն այդ հնարավորությունը, հակառակ դեպքում ո՞ր մի լրատվամիջոցը չի ցանկանա իր աշխատողին ապահովագրել: Լրատվամիջոցները մեծ եկամուտներ չեն ստանում գովազդից, շուկան փոքր է, իրենք հազիվ ծայրը ծայրին հասցնելով կարողանում են միայն աշխատավարձ վճարել», — ասում է Վանյանը:

«Ֆոտոլուրի» տնօրեն Մելիք Բաղդասարյանն էլ կարծում է, որ ոչ միայն լրագրողները ապահովագրված չեն, այլ նաև այն թանկարժեք տեխնիկան, որով աշխատում են օպերատորներն ու լուսանկարիչները:

«Լրագրողն իր գրիչը կարող է պահել ու չեն իմանա, որ լրագրող է, բայց լուսանկարիչը իր սարքն ի՞նչ անի, ո՞նց անի: Նա այդ իրադրության կիզակետում պետք է գտնվի. եթե հեռու եղավ, էլ ի՞նչ լուսանկարիչ, էլ ո՞նց է լուսաբանելու: Նա պետք է լուսանկարներ բերի խմբագրություն: Բաղրամյանի, Սարի թաղի դեպքերի ժամանակ ուղղակի բախտ ենք ունեցել, որ մեր տղաները չեն վնասվել, բայց երբ Խորենացիի վրա հրավառություն արեցին, մեր աշխատողը այրվածքներ էր ստացել», — մտահոգված պատմում է բազմամյա լուսանկարիչը:

Նա դեմ է պաշտպանիչ բաճկոնով աշխատելուն, կարծում է, որ դա ընդամենը կխանգարի լուսանկարիչներին:

«Եթե դա զրահաբաճկոն է, ապա մի 10 կգ ծանրություն է իրենից ներկայացնում, մի ահագին ծանրություն էլ տեխնիկան

է, այդ մարդն էլ ինչպե՞ս կաշխատի: Պարզապէս կարելի է ունենալ բաճկոններ, վրան գրված՝ «Press», բայց կարծում եմ դա էլ չի ապահովի մեր անվտանգությունը»,– ասում է «Ֆոտոլուրի» տնօրէնը:

«4 պլուս» վավերագրական լուսանկարչության հայկական կենտրոնի համահիմնադիր, լուսանկարիչ Անուշ Բաբաջանյանը առաջին անգամ համոզվել է, որ կարիք ունի պաշտպանության, երբ առաջնագծից լուսաբանել է ապրիլյան քառօրյա պատերազմը:

«Ես համակերպվել եմ այն մտքի հետ, որ, լինելով ազատ ֆոտոլրագրող, չունեմ խմբագրություն իմ մեջքին կանգնած: Իմ գործողությունները իմ պատասխանատվության տակ են, բայց եթե լինէր ինչ–որ մի կազմակերպություն, որին կարող էինք դիմել թեկուզ սաղավարտ ու զրահաբաճկոն ձեռք բերելու համար, արդեն մեծ օգնություն կլինէր: Առաջնագիծ մեկնելուց էլ էի մտածում, բայց շատ քիչ ժամանակ ունեի, ու հետո էլ, Հայաստանում նման հնարավորություն չկա: Հնարավոր է, գուցե, սաղավարտ ճարել, բայց զրահաբաճկոն ճարելը շատ դժվար է»,– ասում է ֆոտոլրագրողը:

(Նշված դեպքերից հետո Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը լրագրողների համար ձեռք է բերել զրահաբաճկոններ և սաղավարտներ, մանրամասները՝ տես էջ 6-ում — Իմը):

media.am «Խաչմերուկ»



Անտես



9 789939 106922

© Մեդիա նախաձեռնությունների կենտրոն